

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

Ա.Զ.Գ.ԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35-րդ ՏԱՐԻ

1886 ՓԵՏՐՈՒԱՐ 22

ԹԻԻ 3810

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 22 ՓԵՏՐՈՒԱՐ

ԿՐԹԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԲՈՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ա.

Իմ մէկ յօդուածի (*) մէջ, յիշեր եմ չէր-
նական Բոնապետութեան այն բազմաթիւ հա-
կաբնական սովորութիւններն՝ որոց միշտ
ենթակայ է մանուկի (ցորչալի ընտանիքի
մէջ է նա) կամ մանուկ-աշակերտի հոգե-
կան ինքնաձեռն գործունէութիւնն: Ճիշդ
այդ պատեհ առիթով առաջ պիտի բերեմ
այժմ՝ Կրթական Բոնապետութեան խորագրին
ներքեւ այն քանի մը հակաբնական սովոր-
ութիւններն ալ, որոնք իբրեւ հասարակ
բաներ շատ քիչ առարկայ կը լինին մանկա-
վարական խորհրդածութիւններին, եւ որոնք
սակայն ամեն բանէ աւելի ազդու տպաւոր-
ութիւն կը թողուն մանուկ-աշակերտի թէ՛
հոգեկան, թէ՛ Բարոյական եւ թէ՛ մարմնական
գործունէութիւններին վրայ:

Խօսուած է շատ անգամ, թէ Բոնապետ-
ութեան հոգեբանական տե-
սակէտով, առանց որ եւ է Խոյնհարի միշտ
անհուն ասպարէզ կը բանայ մանուկի (ըն-
տանիքի մէջ) կամ մանուկ-աշակերտի առ-
ջեւ, ուր նորա հոգեկան, Բարոյական եւ մարմ-
նական զարգացում անհամեմատապէս կ'աճի,
մինչդեռ հակառակ պարագայի մէջ ամենա-

թեթեւ վերադարձ մը կը կասեցնէ այդ ա-
ճեցական առաջխաղացութիւնը: Սա՛ շատ
ճշմարիտ իրողութիւն մ'է, որի մէջ հակա-
ռակ հետեւանքներ՝ իբրեւ իրարու հակա-
պատկեր էակներ կ'արտադրեն, — մին՝
կայտառ, զուարթերես, խրոխտ, եռան-
դուն, վայելչակազմ եւ, որի հոգիին մէջ
միշտ վառ են մանկական ամեն ձկտումներ,
որի այտերին վրայ միշտ թարմ են մտային
ամեն արտայայտութիւններ, եւ որի աչ-
քերին մէջ միշտ կենդանի են իմաստուն
նախատեսութիւններ . . . Իսկ միւսն՝ տեն-
դոտ, նիհար, կմախային, ծոյլ, վախկոտ,
անընդունակ եւ, որը առաջինէն համեմա-
տապէս զուրկ է հոգեկան, Բարոյական եւ մարմ-
նական ամեն ընտիր ձիրքերէ:

Այս վերջին պարագայի համաձայն միշտ
ամենատխուր տպաւորութիւն թողած են
մեր մանուկ-էակներին վրայ՝ ի մէջ այլոց
հետեւեալներն, որոց վրայ պիտի խօսիմ ու-
րոյն ուրոյն,

1⁰.— Բռնի բերան սերտել տալ կա-
նոններ, գիտելիքներ, մեծ ու փոքր հատ-
ուածներ (ոտանաւոր, սրճակ) եւ:

2⁰.— Բռնի կարգաւ կամ պատրաստել
տալ դասերը:

3⁰.— Բռնի դպրոց զրկել մանուկները:

Նախակրթարանական եւ Ուսումնարա-
նական դասերի կանոններ եւ գիտելիքներ
(մեծագոյն մասամբ) անվրէպ Բերան — սերտել
կը տրուին մանուկ-աշակերտին: Մեթո-
տական այս օրինակ ընթացք՝ որ Միջին
Դարէն՝ մանաւանդ եկեղեցիէն փոխ առ-
նըլով մինչեւ այսօր անաղարտ կը պահուի
մեր վարժարաններին մէջ, երկու ամենա-
ճշմարիտ հետեւանք առաջ կը բերէ. —

(*) Տես Մասիս, թիւ 3780:

մին՝ որ կ'ապացուցանէ թէ մեր բազմաթիւ ինքնակոչ Ուսուցիչներ (բացառաբար) երբէք չեն կրցած կամ չեն կրնար մի որ և լցէ ծանօթ գաղափար կազմել այն ամեն քերականական, թուաբանական, պատմական եւ հանրապետական, քիմիական եւ հասարակական վրայ, զորս երբ ձեռք կ'առնուն բացառութեամբ մանուկ-աշակերտին. և եթէ միանգամ ընդ միշտ զերծ կենալու համար բացատրելու այդ ծանր աշխատանքէն՝ կը հրամայեն որ այն ինչ կանոն, կամ այն ինչ քիմիական մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը երթան քերականութեան աշակերտներն: Միւս՝ որ կ'ապացուցանէ թէ մանուկ-աշակերտի ոգին պարզապէս է զգուշ տառին, ինչպէս յայտնած է Հ. Սքենսէլը իւր «Գրաստիարակութիւն» գրքին մէջ:

Առաջին հետեւանքը խիստ բացորոշ է իւր երեւոյթով, որի վրայ քիչ մը պարնայիլ հեղեղով, կը յայտնեմ թէ մեր Ուսուցիչներ բացարձակապէս երեւան կը հանեն իրեն անբաւականութիւնն, երբ, ենթադրեմք, Պատ. Թ. Թէրզեանի աշխարհաբար լեզուի քերականութեան, Տ. Պողոսեանի եւ Մ. Մանուկեանի դասագրքեանց այն ինչ կանոն, կամ քիմիական նոյնութեամբ գրել կը տան մանուկ-աշակերտին, կամ քերականութեան կը տան եւ կամ մի եւ նոյն բառերով կը բացատրեն անոնց նշանակութիւնը: Աշակերտներ համար են, իրողութիւն մ'է այս, բայց ոչ թէ այն ինչ դասագրքի այն ինչ կանոնն իւր նոյնութեամբ:

Մանուկ-աշակերտի մտային վարդապետական հակումներն դէպ ի սգոս գործունէութիւնն, միշտ պէտք ունին յստակ, լուրջ, լայնածաւալ, իմաստալիւր եւ պարզ բացատրութիւնների, որը միմիայն Ուսուցիչների կարող հեղինակութենէն կը պահանջուին: Հակառակ պարագայի մէջ, ուր այս վերջիններ պարզապէս հետեւողութեան կը դռնեն իրենց հեղինակութիւնն (եթէ ունին), մանուկ-աշակերտի մտային ուժեր երբէք չեն իրագործուիր, ըսելով ուզեմ թէ, լոյ քերականութեան ցամաք կանոններ, գիտելիքներ և հատուածներ, պահ մը ետք կը մոռնան զանոնք, թողունք որ անոնցմէ մեծագոյն մասն վեր ու վար եւ կ'իստաբեւրան-կը սերտեն կամ թէ բնաւ չեն աչ-

ղիր: Ի՞նչ կը հետեւի ասկէ. — հանելուկը կը լուծուի հոս. — մեր երկիւղած եւ անպարտ մանուկ-աշակերտն պարզապէս կը պատժուի իբրեւ մեղաւոր կամ ոճրագործ, այն ալ անխնայ: Ո՞վ է մեղաւորը, Ուսուցիչն, որ չէ կրցեր, կամ չէ բացատրեր մոլթ կանոնները, թէ մանուկ-աշակերտն՝ որ կ'իսով չափ կամ երբէք չհասկցած՝ բերան-սերտած է: Հոս տղաւորութիւնը՝ երկու էակների վրայ ալ, խիստ արգահատելի է. — մէկ կողմէն Ուսուցիչը կը զայրանայ, կը դռնէ, կարծես մանուկ-աշակերտը ահաբեկ ընելու կոչումն ունի, կը կործանայ, որ իւր պարզութեամբ յանձնուած անմեղ էակը չէ կրցած բերան-սերտել, եւ ամենախոր մտայնութիւն ենթարկեալ կը գտնէ իւր քիչ մը առաջ հանդարտ հոգին: Միւս կողմէն, սոսկալի պատիժների ենթարկեալ մանուկ-աշակերտը կը լայ, կը մորմորի (որչափ չէ մարսած պարթիւն կսկիծը) եւ մտային զարգացման խիստ մեծ սեղմում կ'ըզգայ, այսինքն, իւր միտքն՝ փոխանակ ազատ գործունէութեան մը մէջ նորանոր մտածողութիւններ շինելու, իւր սրտին մէջ կը սահմանափակուի, եւ կը խորհի նա. — կամ վերջնապէս հեռանալ դպրոցական քանջանքանէն, կամ նմանօրինակ մոլթ կանոնները բերան-սերտել եւ յանձն առնուլ վայրկեանական պատիժը, եւ կամ մի որ եւ լցէ բարի համակրութիւնն չտածել առ Ուսուցիչն, (այսպիսի ողբալի օրինակներ շատ ունինք դժբաղդաբար): Սոյն հետեւանքը որ առաջ բերի, իրողութեանէ աւելի իրողութիւն է:

Պարթ, որի կիրառութեան բոլոր ոյժովս դիմագրած եմ, թէպէտ չատ քիչ անգամ փորձուած, այն ալ խիստ անբաւարար է: Հանրամասնները՝ ներքեւ, երբէք եւ երբէք չկրնար մարդել մանուկ-աշակերտի հոգեկան, բարոյական և մարմնական ինքնագործունէութիւնը: Սա՛ նոյնպէս իրողութեանէ աւելի իրողութիւն է:

Գանք քերականութեան միտաբանական վարդապետական մասին: Ի՞նչ է անոր հետեւանք. — բացարձակ սեղմում, որ կ'իրագործուի մանուկ-աշակերտի հոգեկան ինքնաձեւն ոյժերի վրայ, (որը մի և նոյն ժամանակ կ'ազդէ նորա բարոյական եւ մարմ-

նական ոյժերին վրայ ալ) զոր ցուցուցի վե-
րեւը անցողակի կերպով:

Պարզենք զայս:

Մանուկ — աշակերտի հոգին՝ որ ամեն
մանրերկրորդին անհանդարտ ինքնագոր-
ծունէութիւնով պայտանքեր կ'ընէ հոս, հոն,
ներս, դուրս, չըջակայ եւ հեռաւոր վայ-
րեր, երկինքի երեսը, երկրի մակերեւոյթի
վրայ, ծնողների, բարեկամների, զրացի-
ների, ընկերների, մանուկների, չափահաս-
ների անցեալ, ներկայ եւ ապագայ գոր-
ծունէութեան, եւ զանազան դէպքերի վը-
րայ, բնաւ չկրնար պահ մը զուրկ նկատել
ինքզինքն այսօրինակ հմայիչ՝ մի եւ նոյն
ժամանակ չահագրգիռ զբօսանքներէ: Թէ-
պէտ այս եզրակացութեամբ չեմ հետեւ-
ցնեմ որ մանուկ — աշակերտի հոգին պէտք
է բոլորովին սանձարձակ կամ անզբաղ ը-
նենք, եւ յանձնենք զայն լոկ իւր զուար-
ճութիւններին: Ո՛չ, այլ կը հետեւեցնեմ թէ
մանուկ — աշակերտի հոգին՝ ոչ մէկ վայր-
կեան չկրնար պարտալիլ այն բանով՝ որի
մէջ նշանակեցի մը չափ հրապոյր չկրնար
գտնել:

Բացի այդ, Բեբան — «Երբեք զրուծիւնը
որ միմիայն բառերը մտքին մէջ շարեւել կը
ծառայէ, երբեք չկրնար հաստատուն կապ
դնել ցամաք բառերի եւ յիշողութեան մէջ:
Ձի ըմբռնողութիւնը՝ իւր հոգեբանական
տեսակէտով, կը կատարուի միմիայն այն
յաջող հանգամանքների մէջ, որոց ներքեւ
տեղի կ'ունենայ համերաշխ հաղորդակցու-
թիւն՝ ընդ մէջ բացատրեալ բառերի եւ յի-
շողութեան, այսինքն այս վերջինն միայն
այն ժամանակ կը տպաւորէ բառերն իւր
մէջ, երբ նորա մանուկ-աշակերտի լիակա-
տար գիտողութեան, հարցասիրութեան եւ
հասկացողութեան կենթարկուին: Շատ
պարզ է թէ, ինչքան ալ լինին կանոններ
եւ գիտելիքներ, երբ ճշդապէս կը հասկը-
նայ մանուկ — աշակերտը, այլ եւս աւելորդ
են նոյնութեամբ մտքի մէջ շարուելու: Պէտք
է բարեմն, այս ինչ այն ինչ հեղինակի հա-
մառօք, ընդ արձակ, սահմանափակ եւ մը-
թին խնամքներն եւ քեփքեփներն լուրջ բա-
ցատրութեան ենթարկուին, (առանց բա-
ցառութեան) եւ յանձնուին մանուկ — աշա-
կերտի անմիջական հայեցողութեան եւ հե-
տաքրքրութեան, թող տալով որ այս վեր-

ջինն իւր ըմբռնողութեան համեմատ տար-
բացնէ զայն իւր յիշողութեան մէջ:

Արդ, քանի որ Բեբան — «Երբեք զրու-
ծիւնը բացարձակապէս սեղմում առաջ կը
բերէ մանուկ — աշակերտի հոգեկան (որի
աղդեցութիւնը միշտ կը բանի բարոյական
եւ մարմնական ոյժերի վրայ ալ) ոյժերի
վրայ (*), խոնարհաբար կ'առաջարկեմ Ազգ-
վարչական մարմիններին եւ մեծարգոյ Ու-
սուցիչներին որ խնամքների, քեփքեփների եւ
զանազան հատուածների (ստանաւոր, ար-
ձակ) Բեբան — «Երբեք զրուծիւնը
մեր «մեթոտական» դասաւանդութիւննե-
րէն վերջնապէս ջնջելու հոգ տանին:

Իսկ մնացեալ մնասական սովորութիւն-
ներ՝ իմ կրթական Բանապետութեան խորագրին
ներքեւ կը շարունակուին ուրիշ ժամանակ:

Վան

ՍԻՄՈՆ ՅՈՎՆԱՆԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ա Պ Ո Ւ Շ Ը

Դ.

Ար կարծուի թէ կանայք երբ չունենան
ո՛ր եւ է վիշտ, անհանդիստ կ'ըլլան: Անոնց
սրտին համար, որ միշտ հրատառեալ է, վիշ-
տը այն թուխ, փոքր, մուրեալ ամպն է
որ ամբար օրերն յանկարծ ծփալով երկնից
երեւն մի քանի րոպէներ զգովութիւն կը
պարգեւէ արեւակիղ հողին: Ի շնորհս ու-
նայնասիրութեան ոգւոյն զոր Նախախնա-
մութիւնը պարգեւած է կանանց, սոքա կա-
րող են միշտ դարբնել իրենց համար նը-
րանոր վշտեր:

Սակայն ունայնասիրութիւնը, որ կենաց
պարահանդէսի մէջ ա՛յնքան սիրուն, ա՛յն-
քան հրապուրիչ կ'ընծայէ կինն, ընտանե-
կան յարկի ներքեւ գիշերադէմ չղջիկ մ'է,

(*) Թէպէտ անուրանալի է որ բացառիկ հանգա-
մանքների մէջ (օրինակ թատրոններ, հանդէսներ) կը
ներուի մեզ այսօրինակ խոշտանգիչ վարմունք մը ու-
նենալ դէպի այդ քնքոյշ էակները:

չարագուշակ բու մը : Արեւելցիք որ ջերմապէս կը սիրեն ընտանեկան հանգստութիւնը, վասն զի իրենց քաղաքներու ներքին կազմակերպութեանց պատճառաւ կը պարտաւորին տան մէջ անցունել ժամանակի մեծ մասն, նուիրած են իրենց հոգածութիւնը գոհացում տալու կանանց ունայնասիրութեան ոգւոյն : Արեւելցիք գիտնալով որ կին մը ունայնասէր չպիտի լինէր եթէ իւր քով չգտնուէր ուրիշ կին մը, ջանադիր եղած են կանոնաւորել մի եւ նոյն ընտանեաց մէջ գտնուող կանանց յարաբերութիւններն : Արեւելեան ամէն ընտանիք փոքր արքունիք մ'է յորս խստապահանջութիւն կը տիրէ յարգամեծար յարաբերութեանց մասին : Արեւելեան ընտանեաց աւանդութեանց մէջ ամենայն խնամք կենդանի պահուած են կեսրոջ մը եւ իւր հարսին միջեւ յարաբերութեանց օրէնքներն : Ինչ վիճակի մէջ ալ գտնուի կին մը, միշտ քաղցր է իւր սրտին խոնարհած տեսնել իւր առջեւ ուրիշ մի կին, մանաւանդ երբ ինքն արդէն կենաց իրիգնամուտին կը մերձենայ : Իսկ նա խրոխտ է իւր երիտասարդութեամբ, ընտանեկան աւանդութիւնը օրինաց ձեւ տուած են այն ամէն արտաքին ցոյցերուն որոց շնորհիւ կեսուր մը կը փառաւորուի : Ուրեմն եթէ մտնենք Լեւոնի տունը պիտի տեսնենք թէ Լեւոնի մօրը, Շարուհի հանձմին դէմքը պայծառափայլ էր վասն զի այլ եւս հասած էր այն ժամանակն յորում գոհացում պիտի ստանար այն փառասիրական տենչն որ ամէն կեսուրներու սեփականութիւնն է : ունէր հարս մը որ խոնարհաբար պիտի համբուրէր իւր ձեռքերն : Ինչ պարտականութիւններ որ Շարուհի հանձմ կատարած էր իւր կեսրոջն ի հարկէ կ'սպասէր նոցա անթերի գործադրութիւնն իւր հարսին կողմանէ :

Լեւոնի եւ Ֆոթիւնէի հարսանեաց երկրորդ օրն, երկուշաբթի առաւօտ Լեւոնի տան մէջ հիւրընկալութեան սենեակը նստած էին Սահակ աղա, կինը, մի քանի անխուսափելի ազգականներ ու ազգականուհիներ ոյք գիշերն անդ անցուցած էին : Լեւոն արդէն եկած էր եւ վառարանին մօտ աթոռի մը վրայ նստած ձեռքերը կը տաքցնէր : Կէս օրի մօտ հարսին ոտքի ձայնը լսուեցաւ, սանդուղներէն կ'իջնէր : Լե-

ւոնի քոյրն Աննիկ անմիջապէս դուրս ելաւ, հարսին ընդառաջելու : Շարուհի հանձմ ինքզինքը ժողվուեց, պաշտօնական դիրք մը առաւ, ձախ ձեռքովն աջ ձեռքը սրբեց : Սահակ աղա, թէպէտ աւելի խոնարհ, բայց նա եւս պատրաստութիւններ տեսաւ : Այդ արարողութեանց շարժառիթը բնական էր : հարսը ներս մտնելով ի հարկէ կեսրոջն ու պարոնտաթին ձեռքերը պիտի համբուրէր : Եւ արդարեւ Աննիկ, Ֆոթիւնէի տուած թեւը ներս մտան միասին : Ֆոթիւնէ գլուխը ծռեց, և աւագանիս բարեւ մը տալով աթոռի մը վրայ նստաւ քովընտի : Կարծես թէ ամէնքը սառեցան նստած տեղերնին : Ազգականներն իրարու երես նայեցան, ցրտութիւնը տիրեց այդ բոլորին, խօսակցութիւնն այլ եւս պաղած էր :

Այդ օրէն ամբողջ չաբաթ մը տեւեց այդ պաղութիւնը : Սրտաբեկ էր Սահակ աղայի կինն : Ֆոթիւնէ միշտ ցուրտ էր այն ամէն բարեկամաց, բարեկամուհեաց, ազգականաց, ազգականուհեաց համար որք կը տեղային Պոլսոյ ամէն թաղերէ : Նրբ պառաւ ազգականներ « խեղդ տեսնանք, աղջիկս» լսելով թեւերնին բացած կ'ուզէին համբուրել Ֆոթիւնէի ձակատն ու երեսները, կամ առանց հրաւերի ինքնաբերաբար կ'երկնցնէին իրենց ձեռքերն որպէս զի հարսը համբուրէ, Ֆոթիւնէ կը գոհանար գլխու բարեւով մը : Դիւրին է երեւակայել թէ Սահակ աղայի, Շարուհի հանձմի ազգականաց շրջանակներուն մէջ նոր հարսին համբաւն ինչ գներով նշանակուած էր : Կը գտնուէին այնքան բարեսիրտ կիներ որք կը ցաւակցէին Շարուհի հանձմին եւ կը հաղորդէին նմա ինչ որ կը խօսուէր դուրսը, եւ խեղճ կնոջ ցաւոյ վրայ կը բարդէին նոր ցաւեր :

Բայց երբ այցելուները չէին շուգործներ — ինչպէս Ֆոթիւնէ կ'անուանէր իւր նոր ազգականներն —, և կը բուրէր իրենց վրայ եւրոպական հոտ մը, հոգ չէր որքան ալ թեթեւ լինէր, այն ատեն Ֆոթիւնէ շնորհալի էր եւ քաղաքավար, մանաւանդ երբ այցելուներն այնքան ազնուացած էին որ փոխանակ ըսելու հանձմ, կամ տիկին, ինչպէս էք, կ'ըսէին :

— Մարտ, ինչպէս էք :

Հարսանեաց առաջին չաբաթը կը բոլո-

ըէր եւ ըստ հնաւանդ սովորութեան հարկ էր եօթներորդ օրը եփի, ձեռք-պագի երթալ հարսին ծնողաց: Այդ այցելութիւնը կատարել այնքան բնական էր որ այդ մասին խօսիլն իսկ աւելորդ կը համարուէր: Շաբաթ գիշեր Սահակ աղա խօսք բացաւ երթալու ժամը որոշելու համար միայն: Ֆոթիւնէ չոր կերպով մերժեց եփի փփի երթալն: Ինքն այնպիսի հինցած, պառակտեալ սովորութիւններէ ակորժող չէր: Սահակ աղա եւ կինը լռեցին, ուրիշ լաւագոյն ոչինչ կրնային ընել:

Բայց երբ Լեւոն առաջարկեց այցելութեան երթալ կնքահօրը, Սինայեան Մկրտիչի, որքան գոհունակութեամբ Ֆոթիւնէ յանձնառու եղաւ կատարել այդ պարտականութիւնը: Կիրակի, կէս օրէն մէկ ժամ վերջ, չքեղ լաւք մը — Ֆոթիւնէ անպատճառ լաւք ուղած էր — կայնեցաւ Լեւոնի տան առաջ: Ֆոթիւնէ ամուսնոյն հետ մտաւ կառքն եւ իբր մի իշխանուհի բազմեցաւ: Նշանուած օրէն ի վեր առաջին անգամ դոհ կը լինէր — աւա՜ղ շատ կարճ միջոցի մը համար: — Սինայեաններու տունը Ֆոթիւնէն ով որ տեսնէր այն օրը, կը կարծէր թէ աշխարհիս էն երջանիկ կինն է նա: Կը դիմէր կանացի ամէն նրբամտութեան որպէս զի կարեկցութեան արժանի էակ մը չերեւեր յաջա տիկին Հերիգայի: Գոռոզութիւնը կանանց յատկութեանց, կամ թէ թերութեանց, ինչպէս որ կ'ուզէր, ամէնէն տոկունն է: Սրտի դժբաղդութեանց մէջ գոռոզութիւնը կանանց վրկաւորար ապաւէնն է: Եւն դժբաղդ կիներն էն նուաղ հստատները լինելու են: — Եւ յետոյ, առանց խորհելու, առանց մտածելու, ինքնաբերաբար, Ֆոթիւնէ Մկրտիչ Սինայեանի հաճոյ երեւելու պէտք մը կ'զգար: Ամուսնացած երիտասարդի մը հաճոյ լինելու կենսական պայմանն է ունենալ ուրախ զուարթ դէմք մը եւ Ֆոթիւնէի դէմքը բնազդմամբ զուարթ էր այն օրն:

Այդ ուրախութեան հետքերը մնացին Ֆոթիւնէի այտերու վրայ, նշմարեց զայն Լեւոնի մայրն եւ լաւագոյն օրերու բարեդուլակ յոյսը վերստին ժպտեցաւ իրեն: Որքան ալ վշտացած էր այդ կինը, բայց և այնպէս խոհեմութիւն համարած էր չյանդիմանել հարսը, զաւկին սիրտը չկտրելու

համար: Այդ այցելութեան շաբաթը միտքը դրաւ որ յառաջիկայ կիրակի օրն հարսն առնէ եւ եկեղեցի երթայ: Կեսուր մը միայն գիտէ թէ որքան բերկրութեամբ կը զեղու իւր սիրտն երբ կիրակի առաւօտ մը եկեղեցի կ'երթայ նոր հարսն առջեւը ձեռքած: Երբ կը մտնեն վերնատուն կարծես թէ դիւթական աղդեցութեամբ մը բոլոր աղօթող կանայք կը մոռնան որ բարեպաշտներ են, այլ միայն կը յիշեն թէ կին են: Ամէնքն հետաքրքիր իրենց երեսները կը դարձնեն որպէս զի նային նոր եկողին: Մոմ վառող կինն արդէն մէկուն ըսած է և այդ փոքրիկ անգաղտնապահութիւնը կը բաւէ որ նոր հարսին ու կեսրոջ գալըստեան համբաւը վերնատան չորս կողմը թըռչլտի: Ամէնքն իրարու ականջէ կը փափսսան. «Ան է, ան է»: Մոմ վառող կինն սովորականէն աւելի փութաջան է: Խփփին առջեւը նստողները տեղ կը բանան հարսին: Հարսը ամօկոտ է, բայց կեսուրը կը փառաւորուի, անուշ երաժշտութեան մը պէս կը հնչեն այդ փափսուքներն իւր ականջին:

Եւ երբ կ'աւարտի ժամերգութիւնը, այն ամէն կանայք ոյր թէեւ ընտանեկան յարաբերութիւններ չունին բայց վերնատան դրացիներ են, կը պաշարեն կեսուրն ու հարսը. «Երբ տեսնես, հանրմ, քուրուկ» ըստ աստիճանին: — Աղնուական կիները այն օրը մի քիչ ուշ կ'իջնեն, որպէս զի հարցնեն մոմ վառող կնկան թէ ով էր այդ նոր հարսը: — Եւ այդքանով չբաւեր. Թաղին մէջ նոյն օրը միշտ կը խօսուի կեսրոջն ու հարսին վրայ: Եւ ո՞ր կին չը ցանկար սրտին խորէն գէթ օր մը ընդհանուր խօսակցութեան առարկայ լինիլ: Լեւոնի խեղճ մայրն այդ փառքէն զուրկ մնաց: Ֆոթիւնէ մերժեց կեսրոջն առջեւն ինկած եկեղեցի երթալ: Արդէն ինքն եկեղեցի դացող չէր. եւ եթէ եկեղեցի երթալ ուզէր ինքն, էրիկ ունէր կրնար երթալ:

Յուսահատեցա՞ւ Շարուհի հանրմը: Կանայք որքան փափուկ ու տկար արարածներ համարուին, բայց յամառ ու հաստատամիտ են երբ իրենց սէրը կամ փառասիրութիւնը խնդրոյ առարկայ է: Շարուհի հանրմ անպատճառ իւր կեսուրական իրաւունքներն ի գործ պիտի դնէր: Հարսը կարող էր իւր ամուսնոյն հետ եկեղեցի եր-

Թալ, կարող էր նորա հետ հատուցանել փոխադարձ այցելութիւնները, բայց կարող չէր ամուսնոյն հետ կատարել մի մեծ արարողութիւն, այն է բաղնիք երթալ։ Ի հարկէ բաղնիք գնալու արարողութիւնն այնքան վսեմ չէ որքան եկեղեցի երթալ, բայց վերջապէս ըստ բաւականին փոխարինութիւն մը կրնայ համարուիլ։ Բաւական է զի օր առաջ մի քանի տուններու մէջ իմացուի թէ նոր հարսն այն ինչ օրը բաղնիք պիտի երթայ, այդ օրն արդէն կանանց պատկանելի բազմութիւն մը կը գրաւէ բաղնիքն։ Եւ ի՞նչ հրճուանք կեսրոջ մը համար երբ հարսն ամենայն խոնարհութեամբ եւ գորովանօք կը սրբէ կը չորցնէ իրեն կոնակը, կուրծքը եւ կը համբուրէ ձեռքը։ Բայց Յօսթիւնէ կը սոսկար այդ ստորոնութենէ եւ բացարձակ կերպով կեսրոջն յայտարարեց միանգամ ընդ միշտ թէ՛ ինքը տեղ պիտի երթայ նէ թող երթայ, բայց այլ եւս իր ետեւէն չիլնայ, ինքն ալաֆուսնակայ մեծցած աղջիկ է, անանկ հին կնկան բաներ չը գիտեր։

Այդ օրէն արդարեւ Դարուհի հանրմ յուսահատեցաւ։ Տեսակ մը դժգոհութիւն, տեսակ մը տխրութիւն տիրեց տան մէջ։ Յօսթիւնէ շատ անգամ կը քաշուէր իւր սենեակը, ոչ մի ընտանեկան հոգ կը կրէր, կարծես թէ օտարական մէջր այդ տան մէջ։ Եւ Լեւոն որ այնքան կը սիրէր ընտանեկան կեանքն ու հանգստութիւնն, սկսաւ ընկղմիլ մտատանջութեանց մէջ։

Միայն հինգշաբթի օրերը կը փարատէր Յօսթիւնէի թախիծն։ ամէն հինգշաբթի գիշեր կ'այցելէին Սինայեաններու։ Յօսթիւնէ հետէ ամուսնացած էր Մկրտիչ Սինայեան, ինքն եւս իւր օրն ունէր որ էր հինգշաբթի։ Ամէն հինգշաբթի գիշեր կը հաւաքուէին նորա տան մէջ մի քանի հայ վաճառականներ, երկու երեք փաստաբաններ, նոյն թուով բժիշկներ, եւ ասոնց մեծ մասն կուգային, ըստ պղտպան սովորութեան, առանց ընտանեաց։ Այդ ընդունելութեանց մէջ ժամանակ անցունելու գլխաւոր միջոցը թուղթի խաղն էր։ Տիկին Հերիգա կը սիրէր երաժշտութիւնը, կը սիրէր գրականութիւնն, կը փափաղէր տեսնել իրենց ընդունելութեանց գիշերներն երկուստարդ դէմքեր, երիտասարդ տաղանդներ, եւ մտաւոր զբօսանաց

նուիրել ժամանակին մէկ մասը, բայց տան մեծն ինք չէր։ Ինքն անկարող էր ըստ իւր հաճոյս տնօրինել։ Կը դոհանար ուրեմն եղածովն։ Օր. Սինայեան ամուսնացած էր, նա եւս անդ կուգար։ Սենեակներէ մին յատկացած էր երիտասարդներու, անդ կը գտնուէր դաշնամուրն, եւ Տիկին Հերիգա կ'ստորժէր այդ սենեակը մնալ իւր բարեկամութեան հետ։ Բայց Յօսթիւնէ խոյս կուտար եւ միշտ թուղթ խաղացողներու մօտն էր։ Ինքն ալ կը սիրէր խաղալ եւ կը խաղար։ Լեւոն ստիպուեցաւ չարաթական գումար մը յատկացնել կնոջը. բաւական ծանր էր այդ բեռն իրեն համար, բայց ի՞նչ ընէր, կիներ ամէն բանէ զրկուած չէր կրնար մնալ, եւ յետոյ մի քիչ կ'ապահովէր ընտանեկան հանգստութիւնը։ Յօսթիւնէ կատաղի կերպով պէչկէ կը խաղար, եւ մեծ դոհունակութիւն կ'զգար երբ վաճառականի մը, բժշկի մը դէմ կ'եղնէր, գէթ այդ միջոցով բքան մը կ'երեւէր։ — Նա չէր կըրցած ուշադրութիւն հրաւիրել իւր վրայ։ Ի՞նչ դիրք ունէր որ ուշադրութեան արժանի լինէր. շնորհիւ թուղթի կարեւորութիւն կ'ստանար Սինայեաններու տան մէջ եւ կը պատահէր շատ անգամ որ հինգշաբթի օրերէ զատ ուրիշ օրեր եւս թուղթի պատրուակաւ կը գտնուէր. այդ տան մէջ։

Յօսթիւնէի սիրան հանդարտ չէր. իբր աղջիկ ինչ զգացումներ որ ունէր Սինայեան Մկրտիչի համար, այդ զգացումները կենդանի էին սրտին մէջ եւ անհանդարտ էր։ — Ի՞նչ նրբութեանց չէր դիմեր Մկրտիչը զբաւելու համար։ Սինայեան Մկրտիչ այն անձերէն էր որք կրնան զլաւ մարդ համարուիլ, բայց շատ դիւրասահիկ են են կանանց վերաբերեալ խնդրոց մասին։ Կը սիրէն իրենց կիները, նախանձոտ են չափազանց, բայց խղճահար չեն ուրիշի կիներ սիրելու մասին։ — Ոչ մէկ ազգականութիւն նուիրական է իրենց համար. միայն քոյրերն են գիտեն յարգել։ Կը սիրեն ուրիշ կիներ ոչ թէ սրտի անդիմադրելի զգացումներէ հարկադրեալ, այլ... այլ իրենք ալ չեն գիտեր ինչու համար։ Սխալ է ըսել թէ կը սիրեն, այլ պէտք է ըսել կը վայելեն։ Ի՞նչ է հանդիպին կանանց, եթէ առիթ գտնեն, կը վայելեն, եթէ չհանդիպին, չգտնեն, ան-

հանգիստ չեն լըլար : Իրենց վայելած կիներն ընդհանրապէս անհամեմատ ստորին են իրենց կիներէն : — Այդպիսի անձանց սէրը ոչինչ ունի բանաստեղծական, ոչինչ ունի գաղանային : Անհամ, թոյլ, անհրապոյր իրողութիւն մ'է : անկարեւոր ալ պիտի ըսէինք եթէ ծնունդ չտար ընտանեկան մեծամեծ գիծադրութեանց :

Այդ ձմեռը Մկրտիչ Սինայեան հասկըցաւ թէ Ծօռթիւնէ իրեն հետամուտ է : Անտարբեր եղաւ . եթէ առիթ մը ներկայանար, դժգոհ չէր մնար, բայց պէտք չունէր այդ առիթն որոնելու համար ինքզինքը նեղել : Երբ Ծօռթիւնէ կը մեկնէր իրենց տունէն, ինքն ալ կը մոռնար ամէն բան : Լեւոն ոչինչ կը կասկածէր . մտքէն խի չէր կարող անցունել թէ իւր կինն հին սէրը չէ մոռցած : Տիկին Հերիգա եւս կատարեալ անգործ վիճակի մէջ էր : Բայց մինչ այս մինչ այն ձմեռը կ'անցնէր : Ոչինչ պատահած էր : Ծօռթիւնէ բաւական յառաջադիմութիւն ըրած էր Սինայեանը գըրաւելու մասին, աւելի ոչինչ : Շիտակն ըսելով նոր հարսի մը համար բաւական գործ մ'էր այսքանն ալ : Գարունն եկաւ, գիշերները կարճեցան, գիշերային այցելութիւնները նուաղեցան :

Շուտ հասան մայիսի վերջին օրերը . կը խանձէին Բերայի սալայատակները բարկարեւէն . փոշին կը բարձրանար երկնապողկը պարտաւորէին տանց պատահանները փակել այդ տաք եղանակին մէջ : Հայ-լաջը լքած էր ձմրան իւր սիրելի արուարձանը և կ'ըսունուր հովասուն ու ծովասուն գիւղերն յափուսն Վոսիորի եւ Մարմարայի : Իսկ Ծօռթիւնէ եւ Լեւոն գամուած կը մնային իրենց տեղն . այդ անտանելի էր Ծօռթիւնէի համար : Ամէն օր մտօքը կը թռչէր Պէյլիւք - Տէրէ, Աղզին, գոր չէր տեսած : Կը տառապէր, կը չարճարուէր ոչ միայն այնուզի չէր կարող վայելել ամրանհրապոյրներն այլ զի կը խորհէր նաեւ թէ ինչ պիտի ընէր ձմեռն երբ իւր բարեկամութիւնները խօսակցելի ամրան իրենց զբօսանաց վրայ եւ ինքն անմասն եւ անբաժին այդ զբօսանաց մէջ լուռ մուկ ամօթով մնար : Զէ, անհրապիւն էր այդ, անհրաժեշտ էր որ իրենք եւս օգտւորութեան երթային :

— Լեւոն, կ'ըսէր իրիկունները, շոյելով

ամուսնոյն ճակատն, ինչ պիտի ըլլաս այսպէս : Առաւօտէն մինչեւ իրիկուն կը մըլիս պանքային մէջ, գամուած կը մնաս, ոսկորներդ կը տեսնուին : Ո՛չ կ'ըսունուս, ո՛չ մաքուր օդ մը կը շնչես, ո՛չ այլ ինչ կ'ընես : Այս, բունք բեղի համար չտանիր : Աս Բերան, շատ կը սիրեմ թէպէտ, բայց բեղի համար աչքէս ելած է :

Եւ Լեւոն որ անձկակարօտ էր այդ գործվանաց, կը յուզուէր, կը սեղմէր կնոջը ձեռքերը, սրտին վրայ կը գնէր դայնս :

— Ի՞նչ կրնամ ընել, Ծօռթիւնէս, կ'ըսէր, գալ տարի բան մը կ'ընենք :

— Գալ տարի չըլլար, կը սխալասխանէր Ծօռթիւնէ, ինչ ընեմ չընեմ քեզ գեղ մը պիտի տանիմ . կախեմ պիտի, ծախեմ պիտի, բեղի պիտի տանիմ :

Ո՛չ ծախելու, ո՛չ կախելու չէր ներեր Լեւոն, եւ այդ խնամոտ, այդ հոգած կնոջ սիրոյն ամէն զոհողութիւն յանձն կ'առնուր : — Ի՞նչպէս չուտ կը մոռնար ձմրան տխրութիւնները : Այո՛, ինչպէս որ երեւակայած էր Ծօռթիւնէն, երբ սիրեց զնա, նոյնը կը գտնէր այժմ : — Ո՛չ ապաքէն ինքն ալ արգէն կ'ըզար օղափոխութեան մը պէտքն : Երբ ցերեկներն առիթ կ'ունենար Ղալաթիայէն Պոլիս անցնելու, թիչ մը ատեն կանգ կ'առնուր կամուրջին վրայ, լիաթոք կը շնչէր այն քաղցրասիւք հովերը զորս Սեւ ծովն ու Մարմարան կը խրկեն Պոլսոյ : Եւ յետոյ ըտրը, հայրը, մայրը, ի՛նչքան ժամանակէ ի վեր բանտարկուած կը մնային իրենց տան մէջ : Նոցա համար եւս օղափոխութիւնն անհրաժեշտ էր :

— Կ'երթանք, կ'երթանք, Ծօռթիւնէս, ըսաւ շաբաթ երեկոյ մը, եւ Ծօռթիւնէ մանկական ուրախութեամբ ձեռքերն իրարու կը զարնէր :

— Մօտ գեղ մը, Պոյաճի գեղ կամ Գընալը, կ'ըսէր Լեւոն : Ծախսն ալ քիչ է՛լըլար, երթեւեկութիւնն ալ դիւրին եւ ծընողըն ազատօրէն ըստ հաճոյս կրնային զբօսնուլ :

Պոյաճի գիւղ, Գընալը : — Է՛հ, ի՛նչ ընէր Ծօռթիւնէ այդ որբեւայրիներու տեղերն : Զմեռն, ի՛նչ հպարտութիւն լսել «Մենք Գընալը էինք», երբ Սինայեանը և ուրիշներ պիտի պարծենային Վոսիորով եւ Բրինքբեայով : — Եւ ի՛նքն որ Մեծ կղզի կ'երեւակայէր, Իրաւ

է որ Սինայեաններէ հեռու կը մնար, բայց Մեծ կղզի ~~աւելաւորէի~~ է եւ անշուշտ անոր փայլը պիտի ցոլանար իւր վրայ եւս: — Եւ աս կեսուրն ալ, աս պարոնտատն ալ միշտ իրեն փակած պիտի մնային: Ի՞նչ գիտնամ, դեռ ի՞նչ աղգականներ, ի՞նչ կընդհանրեց պիտի գային լեցուէին: Այս ամէնը կը մտածէր նոյն վայրկեանին եւ առանց բացորոշապէս լեւոնին յայտնելու իւր միտքը, կ'ըսէր.

— Չէ՛, լեւոն, չէ՛, փոխանակ այդպէս երթալու, ամենեւին չերթանք աւելի լաւ է, Հոգիդ բերանդ պիտի գայ, աշխարհքին ծախքին ներքեւ պիտի ընկճուիս, եկող գացողին անպակաս պիտի ըլլայ, ամէն բան քիթերնուս բերներնուս պիտի գայ: — Թէ որ կ'ուզես անոնք տեղ մը խրկէ, ես քեզ պիտի առնեմ երկու շաբաթ, ամիս մը գեղ մը պիտի տանիմ որ հանգիստ, անհոգ անցունես ժամանակդ, ետքը կ'իջնենք անոնց քով:

Եւ լեւոն կը վարանէր, կը չփոթէր. մէկ կողմէն չէր ախորժեք ծնողը ձգել երթալ, միւս կողմանէ կը սոսկար այդ հիւրերու բազմութենէն, ծանր բեռներէ:

Յաջորդ օրը կիրակի առաւօտ կանուխ Փօռթիւնէ կ'ըսէր լեւոնի.

— Ա՛յ, լեւոն, ի՞նչ պիտի ընենք այսօր, մինչեւ իրիկուն պիտի ճաթինք նորէն: Բան մը ընենք:

— Ի՞նչ ընենք, տեղ մը երթանք:

— Մեծ կղզի երթանք:

Արեգնաջեր առաւօտ մ'էր. կ'երեւէր թէ օդը շատ տաք պիտի ընէր. լեւոն ինքն ալ պէտք կ'զգար ծովաջու երթեւեկութեան մը: Խոստացաւ կնոջն երթալ: Շուտով հազուեցան, արդուզարդերնին ըրին եւ մեկնեցան: լեւոն կ'ուզէր քոյրն ալ միասին առնուլ, բայց խօսքն ընել անգամ չհամարձակեցաւ առ ահի կնոջն: Այլ երբ դուրս ելան տունէն լեւոն մի քանի անգամ դարձաւ եւ նայեցաւ. խեղճ աղջիկը, սիրտը կոտրած, պատուհանէն անոնց կը նայէր: Տարաբաղդիկ վիճակ այն աղջկան վիճակն երբ եղբայրն ամուսնանալով ինքն անոր անօգնական կը մնայ. ո՛չ ամառն իրեն համար է, ո՛չ աշունը, ո՛չ գարունը. անմեղ դատապարտեալ մ'է: — Արդեօք մարդասիրական չէ՞ր աւանդութիւնն որոյ հա-

մեմատ չէին ամուսնացներ երիտասարդ մը մինչեւ որ իւր տարեկից քոյրն ամուսին մը չունենար:

Թո՛ղ Աննիկ պատուհանէն վտահար նայի, թո՛ղ նորա մայրը ցաւած լինի աղջիկը միայնակ տունը տեսելով, լեւոն եւ Փօռթիւնէ շտապաքայլ կ'ընթանան, կառք մը կը գտնեն եւ անմիջապէս կամուրջ են:

Կղզիներու շոգենաւը դեռ նոր կը մօտենար կամուրջին եւ մեկնելու մի քիչ ժամանակ պէտք էր. ճամբորդք հարկադրուած էին կամուրջին վրայ սպասել: Ասպասէին առանց ձանձրանալու: Նոր տեսարան Փօռթիւնէի համար, նորանոր ուղեւորներ կը կը հասնէին. ոմանք հանդարտաքայլ, այլք շնչասպառ, ամէնքը վայելուչ հազուած, ամէն դէմքերու վրայ ուրախութիւն մը: Շշուկ, աղմուկ, խօսակցութիւնք: Մանօթներ կուգային, — Ռ՛ւր բարոյն իրարու կը հարցնէին: Եւ ի՞նչ սէգ չեշտով Փօռթիւնէ կ'ըսէր.

— Բրինջիբօ:

— Օդափութութեան:

— Տեսնենք:

Եւ յետոյ, շոգենաւը կարծես ընդարձակ սրահ մ'էր, ընտանեկան սրահ մը. ոմանք նստած էին, ոմանք կը ձեմէին, կը խօսակցէին: Հաստ չից մը կը լսուի, ծովը կ'սկսի փրփրիլ, շոգենաւը կը մեկնի: Փօռթիւնէ աչքերը կամուրջէն կը հեռացնէ եւ կը դիտէ ծովը, հեռաւոր հորիզոնը ուր կղզիներն կարծես ամպերու մէջ փաթաթուած են: — Լուսաներկ օդ, անոյշ հով, ծաղկածեւ կապոյտ ալիքներ կը հրապուրեն բոլոր զգայարանները: Անցնին Գատը — Գիւղէն զոր լաւ կը ճանաչէ Փօռթիւնէ զի անդ բաւական ատեն վարժուհի եղած է:

Գնալը, Անթիկոնի հրապուրիչ չեն իրեն համար, բայց երբ կը հասնին Հալբի առջեւ, սքանչացած կը մնայ:

Կը մեկնին Հալբիէն, կարծես շոգենաւն աւելի ծանրաքայլիկ կ'ընթանայ որպէս զի ուղեւորք սրտալիր զմայլին Ճիւղօմօյի տեսարանով: Փօռթիւնէ կը կարծէ թէ կը նշմարէ հրաշատունի զրախտ մը: Գալարեայ պատնէչ մը, լուսածեմ բլուրներ, փափկաթիւ կանանչներով մշտափթիթք, խառնաթիկ երփներանգ ասլարանքներն կը դիւ-

թե՛ն կը հմայեն զինքն : Լեւոն մտնանիշ ցոյց կուտայ չէնքերը , պատնէշներն եւ ինքն ալ կը խանդաղատի կնոջն ուրախութեամբ :

Կը հասնին նաւամատոյցը , նոր տեսարան , նոր վայելում : Նաւամատոյցը փոքրիկ թերակղզի մ'է , ուղեւորք անհամբեր են , այծերու նման կը ցատկեն դուրս : Բազմութիւնը գրաւած է ամբողջ նաւամատոյցն , ամբարն թեթեւ զգեստներով արքեւ կանայք ուսիս զուարթ խոնուած են . ո՛չ մէկ դէմքի վրայ տխրութեան հետք մը , ամէն ոք ուրախ զուարթ է : Ի՞նչ խնդրութեամբ կ'ընդունուն հիւրերն , եւ հիւրընկալը ու հիւրերն թեւ թեւի կը մեկնին : Ծառօթներ ունին Լեւոն եւ Ծոռութիւնէ , հրաւերներ կ'ընդունին , բայց Ծոռութիւնէ կ'ուզէ Օթէլ մը երթալ , երբեք չէ տեսած հիւրանոց մը , ի հարկէ այդ գաղտնիքը ոչ մէկուն կը յայտնէ : Ծանօթները կ'ըսեն իրենց . « Ամառը հոս անցուցէք , շատ կը զուարճանաք » : Ծոռութիւնէի սրտէն կը խօսին : — Կը նստին զբօսարանը , մէկ երկու ժամ կ'զբօսնուն . երաժշտութիւն , բազմութիւն , խօսակցութիւնք այնքան շուտ կը սահեցնեն ժամերն :

Ճաշի ժամ է , կը մտնեն Օթէլ Գէլի-րանի : Ծոռութիւնէ ո՛չ հիւրանոցի վրայ դադարար ունի , ո՛չ հիւրասեղանի . նորութիւնը զինքը կը շլացնէ : Սեղանին վրայ ամէն լեզու կը խօսուի : — Եթէ մի քանի շաբաթներ այն տեղ անցունէ , ի՞նչպէս պիտի փայլի , ի՞նչ նոր ծանօթներ պիտի ունենայ , ո՛րչափ պիտի զբօսնու : Սեղանէն վերջ մի քանի այցելութիւններ կուտան : Վերջը , երեկոյեան դէմ , ֆայնանով պտոյտ : Առջի օրերն անձրեւ եկած էր , փոշի չկար : Կը հիանար Ծոռութիւնէ անցնելով այն ճանապարհէն որ կը տանի Ճիաքօմ : Փողոց էր թէ անտառ մը :

Վերջին շոգենաւի մեկնելու ժամը հասած էր , վերադարձան նաւամատոյց : Ծոռութիւնէի անհնարին կը թուէր թողուլ այդ հիանալի վայրերն :

— Ի՞նչ կ'ըլլայ , Լեւոն , այս գիշեր հոս կենանք , աղէկ ատեն մը կ'անցունենք : — Եւ Լեւոն ինքն ալ հրապուրուած կը մնար . հեռագիր մը խրկեց տունը եւ հանգստացաւ :

Գիշերն աննկարագրելի տեսարան : Լու-

սինը լիալիր ծաթած էր հանդարտիկ ծովուն վրայ : Քաղցրանուագ երաժշտութիւնը վերստին կը հնչէր . զբօսարան , նաւամատոյց , ճեմելավայր , ամէն ուրեք հոծ բաղմութիւն : Մինչեւ կէս գիշեր զուարճացաւ Ծոռութիւնէ , այնպիսի զուարճութիւն բնաւ չէր վայելած : Այդ դիւթական տպաւորութեան ներքեւ սկսաւ աղաչել , պաղատիլ ամուսնոյն որ գէթ ամիս մը անդ անցունեն : Ի՞նչ կ'ըլլար , քանի՞ ոսկիի խնդիր էր : Լեւոն որ այսքան զոհողութիւններ կ'ընէր ընտանեացն համար , արդեօք չա՞տ բան էր որ քիչ մ'ալ իրեն անձին խընամբ տանէր :

Եւ Լեւոն շատ պատրաստ էր համոզուելու . ամուսնանալէն ի վեր հանգիստ , գոհ օր մը չէր անցուցած . եւ անձկակարօտ էր այդ գոհունակութեան : Օղբափոխութիւն , զբօսանք թէ՛ իրեն եւ թէ՛ Ծոռութիւնէի համար օգտակար էին : Կը մտածէր նաեւ թէ՛ այդ գոհունակութիւնը տալով Ծոռութիւնէի կրնար նորա բնաւորութիւնը փոխել . կը կարծէր թէ խեղճ կինն ամուսնանալէն ի վեր ո՛չ մէկ զուարճութիւն ունեցած էր : Կարելի էր ընտանիքէն մի քիչ ատեն հեռի մնալն ալ նպաստէր յարաբերութեանց բարւոյնման :

Առաւօտը Լեւոն խօսեցաւ պանդուկապետին հետ , ամուսնան մը համար սակարկութիւնն ըրաւ : Երկրորդ շոգենաւով իջան Պօլլիս . Լեւոն Ծոռութիւնէն տուն ձգեց , ինք Պանքան գնաց , երեկոյին եկաւ , պատրաստութիւնները տեսած էր Ծոռութիւնէ եւ մեկնեցան : Սակայն Լեւոնի սիրտըն անհանգիստ էր : Մայրը , հայրը , քոյրը կը թողուր այդ տաք Բերայի մէջ , մինչ հիւրանոցի ծախքովը կարող էր տուն մը վարձել , որով ամէնքը միասին օգտափոխութեան մը կրնային երթալ :

Այդ առաջին շաբաթն որ Կղզին էին , Ծոռութիւնէ կը կարծէր թէ տեղափոխուած էր Յրանապի ծովային վայրերէն մին ուր կը գնան Քրանապի դիւրակեցիկ ընտանիքներն . եւ որոց նկարագրութիւնները կը կարդար վէպերու մէջ : Ուղիղն ըսելով , Ծոռութիւնէ բաւական կերպարանափոխ եղած էր : Քանի որ գոհ էր , ինքզինքը դժբաղդ չէր կարծեր : Հիւրասեղանը մանաւանդ իւր մեծագոյն հրճուանքն էր : Այժմ

Հայ լինելը դադարի էր պահեր . մանաւանդ
կը պարծենար : Ամէն առիթ՝ կ'որոնէր
Փրանսերէն խօսելու : Հայ մը այսպէս Փը-
րանսերէն խօսի կ'ըսէին ծտարներն ու կը
զարմանային , եւ Ֆոսթիւնէի անձնասիրու-
թիւնը գգնեալ էր : Անշուշտ եթէ Փրան-
սուհի մը լինէր ինքն այդքան զարմացում
չպիտի պատճառէր : Գոհ էր ամուսինէն .
վերջապէս եթէ հարուստ ամուսին մը առ-
նէր ասկէ աւելի վայելում կարելի չէր յու-
սալ : Նթէ Տիկին Հերիգայ Սինայեան հոն
գտնուէր որչափ պիտի նախանձէր իւր վի-
ճակին : Այդ շարաթներուն մէջ միայն Ֆոս-
թիւնէ կը գերազանցէր զնա : Հերիգայ կե-
սքորջ մը , պարոնտատի մը ճնշման ներքեւ
քաշուած ենի-քէօյ , իսկ ի'նքն , արձակ , հա-
մարձակ , ազատ : Բայց ձեռն այդ ամէնը
կը պատմէր եւ վրէժը կը լուծէր :

Սակայն «անցանէ եւ այս» : Երես
լրացաւ ամիսն , Յուլիոն եկաւ եւ հարկ էր
իջնել Բերա : — Յուլիոն մէջ իջնել Բերա ,
այդ անհնարին էր : — Անկարելի բան
է , կ'ըսէր Լեւոնին : Ճիշդ ժամանակն է
կղզիի հրճուանաց եւ վար իջնե'ն : — Ծո-
վու ժամանակն է . գեռ նոր կուգան ու-
րիշներ օդափոխութեան : Եւ մէկ ամսուան
մէջ Լեւոնն ալ չէ'ր գիրացած , կերպարանա-
փոխ չէ'ր եղած : — Բայց Լեւոն կ'առար-
կէր թէ՛ ծախք շատ կ'ըլլայ . թէ տոնը
նայի , թէ կղզիի ծախքերն հոգայ , որ իւր
հաշուածէն շատ աւելի եղած էր , իրեն
համար դժուար էր : Ֆոսթիւնէ նեղա-
ցաւ , ծախքն ես կ'ընեմ ըսաւ : Հարսան-
եաց նուէրներն ունէր , կնքահօրը տուած
աղամանդը կար : — Կը ծախեմ եւ ծախ-
սը կը հոգամ : Ինծի համար չէ որ մնալ
կ'ուզեմ , քեզի համար է : Ինչ պիտի ընեմ
աղամանդը :

Լեւոն կարող էր ներել որ կինն ադա-
մանդ ծախէ ու ինքն զբօսնու . բայց խան-
դաւառեցաւ տեսնելով կնոջը պատրաստա-
կանութիւնը այսպիսի զոհողութեան մը :
Մերժեց կնոջն առաջարկն եւ խոստացաւ
ամիս մը , ի հարկին աւելի եւս մնալ : Բայց
յաջորդ օրը մտատանջութեան մէջ էր : Իւր
ամսականը չէր բաւեր այս կրկին ծախսե-
րուն : Եթէ ժամանակաւ խնայողութիւն
ըրած էր , աւելցուցած գումարն արդէն
սպառած էր յորմէ հետէ ամուսնացած էր ,

եւ այժմ մանր մուրն պարտքեր ունէր , փո-
խառութիւն մը ընելու հարկը կը ներկա-
յանար : Ենորհիւ այն վարկին դօր կը վայե-
լէր իբր գրադիր Պանք Օթօմանի մէջ կա-
րող եղաւ այդ փոխառութիւնը դիւրու-
թեամբ ընել : Բեռը թեթեւցաւ , կարեւոր
ծախսերն հոգալու գումարը պատրաստ ու-
նէր , նակայն մտատանջութիւնը միշտ մտա-
տանջութիւն մնար :

Տասն եւ հինգ օրեր անցան այսպէս ,
Ֆոսթիւնէ օր ըստ օրէ աւելի գոհ կը մնար ,
իսկ Լեւոն սկսաւ նեղուիլ : Սաստիկ չոք
կ'ընէր . անձրեւի պակասութեամբ փոշին
այնքան կը բարձրանար որ առանց կառքի
պտոյտի երթալն անտանելի էր : Թողունք
որ նոյն իսկ երբ կ'առքով երթային ալիւրի
պարկ դարձած կը վերադառնային : Եո-
գենաւէն կը նեղուէր . այդ սմուսն փոքր
դանդաղընթաց չոգենաւ մը յատկացուած
էր առաջին եւ վերջին երթեւեկութեանց
համար : Թէեւ փոխառութիւն մը ըրած էր ,
բայց եւ այնպէս զայն մտաւոր ժամանակի
մէջ վճարելու հարկն մտահոգութիւն կը
պատճառէր իրեն : Խիղճն ալ կը տանջէր
զինքն որ ծնողքն ու քոյրը Բերա թողած
ինքն իշխանավայել կեանք կը վարէր : Ի
զուր կ'ուզէր գիշերները մի քանի ժամ
հանգիստ նիրհել . կնոջը սիրոյն պարտա-
ւոր էր ընկերանալ նմա եւ ուշ ատեն ան-
կողին մտնել : Բայց նիրհել անհնարին էր .
մթեղները , կղզիներու համաբաւստ որ այդ
հիւրամեծարք , թոյլ չէին տար որ մի
ժամ հանգարտ ննջէ : Լեւոնի վիճակն
անտանելի եղած էր . ցերեկները գործին
մէջ կը մրափէր , բայց իրենց պետին աչ-
քերը իւր վրայ էին : Պաշտօնակցաց խոր-
հրդով սկսաւ ափիոն գործածել , այն ա-
տեն գիշերներն հանգստութիւն գտաւ ,
այլ ծախս մ'ալ աւելցաւ :

Բայց լրացաւ յուլիս ամիսը , Լեւոն ան-
դեց անպատճառ տեղափոխուիլ Բերա ,
իսկ Ֆոսթիւնէ այս անգամ կատարած էր
տեսնելով որ ամուսինն , այդ տկար երի-
տասարդը , յամառ կերպով կը պնդէ տեղա-
փոխութեան մասին : Գոգոհ , վայրագ
դէմք մը ունէր : Օգոստոս ամսոյ մէջ Բե-
րա վերադառնալ , ծաղր ու ծանակ լի-
նիլ : Լեւոն խօսք չէր հասկնար . սակայն
միւս կողմանէ կը մտածէր թէ ինչ դժե-

դակ կացութեան պիտի ենթարկուի եթէ բռնի կերպիւ կինը բաշէ տանի : Իրաւախոհութեան մը յանգելու պէտքն զգալի էր երկու կողմանց համար : Որոշեցին միահաճ հաւանութեամբ որ օգոստոսի առաջին շաբաթն ալ կղզին անցունեն : Լուսնկայի տասն եւ հինգը կը լրանար այդ շաբաթը, եւ կը խօսուէր թէ Վոսփորէն գիշերային շոգենաւ մը պիտի գար . լաւ զբօսանք մը կ'ըստուէր . ուրեմն թէ՛ լուսնկայն պիտի վայելէին եւ թէ՛ վոսփորեան հիւրերն :

Այդ կիրակին յորում գիշերային շոգենաւը պիտի գար, Լեւոն ստիպեալ էր Վոսփոր երթալ, իւր եւրոպացի պաշտօնակիցներէն միոյն հարսանեաց հանգիսին ներկայ լինելու : Առաւօտեան շոգենաւով գընաց, երեկոյին գիշերային շոգենաւով վերադառնալու պայմանաւ : Փռթիւնէի շատ հոգը չէր ամուսնոյն բացակայութիւնը . թէ՛ հիւրանոցին մէջ եւ թէ՛ դուրսը բազմաթիւ ծանօթներ ունէր որոց հետ կրնար զբօսնուլ :

Երեկոյեան դէմ հեռուէն նշմարուեցաւ Վոսփորի շոգենաւը : Փռթիւնէ հիւրանոցի պատշգամբ ելաւ, եւ հայեակ մը ի ձեռին կը դիտէր հիւրերն : Շոգենաւը կը դատարկանար, բայց ամուսինը չերեւեցաւ : Մէկէն ի մէկ Փռթիւնէի սիրան սկսաւ արագ արագ բաբախել, երեսները կարմրեցան, ծունգերը կը կտրտէին : Տափառենչիկ անձի մը յանկարծահաս յուզման ամէն յայտնի նշաններն էին : Փռթիւնէ նշմարած էր Սինայեան Մկրտիչը որ միայնակ կ'ենէր շոգենաւէն եւ կը յառաջանար դէպի հիւրանոցը, շատ լաւ դիտեց, շոգենաւը պարսլուեցաւ, ամուսինը չէր երեւցած :

Փռթիւնէ փութաց դուռն իջնել, կընքահօրն ընդ առաջ երթալ : — Մօտ երեք ամիսներ էին զիրար չէին տեսած . որպիսի՛ խնդութեամբ տեսակցեցան : Սինայեան հարցուց Լեւոնի ո՞ւր լինելն . այդ միջոցին Լեւոնի կողմանէ հեռագիր մը հասաւ հաղորդելով թէ՛ անհնարին եղած էր իրեն հարսանեաց տունէն մեկնիլ, ուստի Փռթիւնէ անհանգիստ թող չլինէր :

Անհանգիստ լինէ՞ր . եթէ հեռագիրն չը հասնէր իսկ, այն պահուն Փռթիւնէ մոռցած էր անգամ թէ ինքն ամուսին մը ու-

նէր : Փռթիւնէ հրաւիրեց Մկրտիչն հիւրանոց . թէպէտ նա յայտարարեց թէ մի քանի պարտաւորիչ այցելութիւններ ունի, բայց Փռթիւնէ պնդեց թէ այսօր իրենց հիւրըն է . եթէ կ'ուզէ ուրիշ անգամ այցելէ այլոց : — Մկրտիչ մի քիչ հանգիստ առաւ . այդ միջոցին Փռթիւնէ զգեստները փոխեց : Սան ու կնքահայր մեկնեցան հիւրանոցէն պտոյտ ընելու : Վերադարձան երբ ճաշի ժամանակ էր, բաւական խոնջ էին, լաւ կերան : Սինայեան գոհ չմնաց սեղանի ըմպելիքով եւ ընտիր գինի բանալ տուաւ : Փռթիւնէ սովորականէն աւելի խմեց . երբ սեղանէն ելան Փռթիւնէի գլուխը ծանրացած էր . այտերը կարմրած, աչերը հրացայտ : Քիչ մը հանգստանալու պէտք կ'ըզար : Սինայեան թոյլ չտուաւ որ միայնակ երթայ իւր սենեակն այլ իւր բազուկը տուաւ նմա . Փռթիւնէ ուժով կռիւնեցաւ Սինայեանի ջլապինդ բազկին : Երբ մտան Փռթիւնէի սենեակն, ճրագը վառեցին, աղոտափայլ լոյս մը : Փռթիւնէ թիկնաթուր մը վրայ ինկաւ . Մկրտիչ ձեռքը նորա ճակարին տառաւ տեսնելու թէ տաքութիւն կայ : Կայրէր ճակատը : Փռթիւնէ սեղմեց Մկրտիչի ձեռքը դողդալով :

Շոգենաւի մեկնելու չվոցը կը լսուէր Սինայեան Փռթիւնէի սենեակն էր տակաւին . աճապարեց մեկնելու եւ մեկնեցաւ, կրկին ուժով սեղմելով Փռթիւնէի ձեռքը : Փռթիւնէ միայնակ մնաց բայց աւելի հանգիստ էր եւ գոհ սրտով : Պատուհանին վարագոյրը բացաւ, պատուհանն ալ բացաւ, եւ քրտնաթոր կայնեցաւ պատուհանին առաջ : Գիշերուան դով օդը ծծեց : — Ունէ՞ր խղճի խայթ մը : — Ոչ : — Կարծես վրէժ մը լուծած էր, այնքան գոհ էր : Այն գիշերն հանգիստ նիրհեց, երբեք այդքան անվրդով եւ խաղաղ չէր նիրհած :

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ
(Շարունակելէ)

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՆՁՆԻ ԿԱՐԻՆ

Բ.

Այն միջոցը յորում կը գտնուին այժմ Պայազիտի Մե-Ռեաթիթիւթիւնն, եւ Գարաբլիխէի, Տիատինի, Ալաշկերտի եւ Հասան-Ղալէի Գայմաթիթիւնները, կը գըրաւէ նախկին Կողովիտ, Ծոզկոտն, Բագրեւանդ եւ վերին ու ներքին Բասեան գաւառներն:

Տիատին եւ Գարաբլիխէ մէկմէկ գիւղեր են միայն որք գայմաթամանիտ լինելով ունին թղթատար եւ հեռագիր, որպէս կը գտնուին դորա միւս գաւառակաց մէջ ալ: Տիատին աւելի կարեւոր է Գարաբլիխէէն, որ թէպէտ 30 տնով գիւղ մ'է գարձեալ (յորոց 5-6 եւ եթ թուրք, միւսներն հայ) բայց Գոր անուն վտակին Նիւրատայ խառնուած տեղն եւ Պարսկաստանի մեծ ճանապարհին վրայ կառուցուած լինելով, ի մօտոյ քաղաք մը դառնալու պատեհութիւն ունի: Արգէն իսկ այժմէն ստացած է մասամբ մը քաղաքի կերպարանը ոչ միայն բաւական կարեւոր վաճառանոցովն որոյ առեւտրական շարժումն բաղդատաբար փոքր ինչ չէ, այլ եւ քաղաքացիներու գեղեցկակերտ տուններով, որք ամբողջովին սեպհականութիւն են Բաղիշեցի Հայոց, եւ ուր որ Բաղիշեցին ներկայ է, անդանօր առեւտուրն կենդանի է, ըստ որում առանց այդ ամենակարեւոր պայմանին նա չհաստատուիր տեղ մը:

Ալաշկերտ, աղաւաղում վաղարշակերտ անուան, համանուն գայմաթամութեան կեդրոնաւանը, քիչ մ'աւելի ընդարձակ եւ կարեւոր է քան զՏիատին եւ Գարաբլիխէ, բայց վերջինէն նուազ փայլուն ապագայ ունի, զի Պարսկաստանի ճանապարհի ճիշդ գծին վրայ չլինելով եւ երկու ժամու չափ հեռի գտնուելով՝ օր ըստ օրէ կը կորուսանէ իւր շինութիւնն եւ կարեւորութիւնը, զոր կը փոխանակէ Գարաբլիխէ: Թօփրագ-Գալէ սակայն, այդ է Ալաշկերտի բերդին անունը, աւելի վայելուչ դիրք եւ պատ-

ուական ջուր ու կլիմայ, ունի առ երբ կալով Սուկաւէտ լեռինն յարեւելից, որոյ կըստանայ յաւէտ զեփիւսն եւ զովութիւնն: Թօփրագ-Գալէ անուան համեմատ հողազանդուած բերդ մի է կոնաճեւ բարձրացած եւ ոչ ինչ մեծ սարահարթով: Հաւանօրէն արուեստական բլուր մ'է այն քան բնական, զի հին շինութեանց, որմոց եւ քարաշարաց նշխարքները բազմազան բեկորներով կը ցուցնեն թէ մարդկային ձեռքն յոյժ մեծ աշխատութիւն ունեցած է նոցա վրայ: Աւանդաբար կը պատմուի նաեւ թէ բերդ-բլուրին սարատափէն ներքնուղի շինուած կայ եղեր մինչեւ դիմացի խորաձոր հեղեղաբը ջուր առնելու համար: Թէպէտ հետքը չ'երեւիր այժմ, բայց նկատելով թէ նմանօրինակ ստորերկրեայ ճանրայ ունին դրեթէ հին բոլոր բերդերը, որպէս տեսած եմ Վանայ, Բալուայ, Սասնոյ եւ բերդորէից վրայ, անհաւանական չ'երեւիր ստուգութիւնը: Ալաշկերտի ներկայ փոքրութեանը չնայելով որ հազար տուն իսկ չ'ունի, վաղարշակերտ աւերակներէն դատելով, խիստ ճոխ ընդարձակ եղած է, անշուշտ արժանի դաստակերտ իւր հոյակապ հիմնադրին:

Հասան-Ղալէ, նախնի Յուստինիանուպոլիս(°), աւելի մեծ է վերոյիշեալ աւաններէն, նոյն իսկ Պայազիտէն ալ, թէ եւ նորա համբաւը չ'ունի: Քարաժայռէ ձեւացեալ բնական դղեակ մը, կրկնատակ բարակուս պարիսպները, թէպէտ մեծ մասամբ քանդուած եւ անպէտ դարձած, բազմայարկ մեծ մեծ տուններ, սպիտակածեփ, ապակեղարդ, չքեղ վաճառանոցը, սրճաւանները, բաղանիքները, մզկիթներն եւ աշտարակներն. եւ այլ զանազան երեւոյթներն, որք բացակայ են գիւղերը, անմիջապէս զգալի կ'ընեն թէ Կարնոյ արեւելակողման այս պատուարը — զի 6 ժամ միայն հեռու է անտի Հասան-Ղալէ — անփական քաղաք մ'է իրօք, թէպէտ փոքր, զի 1500ի չհասնիր բնակչաց տանց թիւը: Բայց Թուրքիոյ արեւելեան գաւառաց մէջ, յորս Նիւրատի երկու ճիւղերը եւ Տիգրիս ու Երասխ կը հոսին, միակ քաղաքն է թերեւս սա, ուր մահմետական եւ ոչ-քրիստոնէայ տարրն կը տիրէ առեւտրական հրապարակին գրեթէ ամբողջովին. զի սրճապեւտներն եւ պանդոկապեւտներն անգամ իրենց բոլոր

պաշտօնեայնեւրով թուրք կամ պարսիկ են աստ, կը թողու՞մ ասել նաեւ եւրոպական ապրանաց եւ ներքին իրեղինաց վաճառականք եւ արուեստաւորք: Եւ այս երեւոյթն այնքան աւելի զարմանալի է, որքան ճիշդ է թէ Հասան-Ղալէ վերջին պատերազմին ժամանակ երկար տոնէն՝ գրաւեալ մնաց ի Ռուսաց: Բայց այս ալ մոռնալու չէ որ յետ հաշտութեան բաւական գաղթականներ եկան աստ Ռուսաց թողուած գաւառներէն: Նշանաւոր են քաղքիս առջեւ գտնուող երկու ջերմուկներն որք երթալով յԵրասխ կը հոսին:

Վերեւ նշանակեալ բոլոր գաւառակներն վերկ են իսպառ ծառատունկերէ, ներկայելով լերկ եւ անգարդ դաշտատափ մը նման Կարնոյ եւ Մշոյ դաշտերուն: Արդէն Բասեան գաւառն անփայտ մակդ իր ալ ունէր ի հնումն: Սողանլուի լեռներն էին որ փայտ կը մատակարարէին այս գաւառաց: Նոցա մեր սահմանադրութեն անդին մնալէն ի վեր առաջին կարօտութիւնն այս կողմի ժողովրդոց փայտի մասին է որ կը յաջորդէ դրամի կարօտութեան անմիջապէս:

Արգաւանդութեամբն խիստ նշանաւոր են Բագրեւանդայ եւ Բասենու դաշտերն, որոց արմտիքն ալ տեսակին աղնուութեամբն եւ սպիտակութեամբն խիստ գերազանց են քան զանազան գաւառաց արմտիքներն, զորօրինակ, քան զՎասպուրականի, զՏուրուբերանի, Եկեղեաց, Քարբերդու եւ: Այսոք ժողովրդեան ապրուստը արմտեաց վրայ հիմնեալ է, սակայն դրեթէ ամէն տարի, բաց ի սովի տարիներէ, բաւական մեծ քանակութեամբ ցորենազգիք կը փոխ գիւղացւոյն հողածածուկ շտեմարանին մէջ, եւ ինչ որ ի Կարին տարուելով կը ծախուին, փոխադրութեան ծախուց պատճառաւ երկրագործին մեծ օգուտ մը չեն կրնար ընծայել:

Պայազիտէն մինչեւ Կարին Հայոց մի եւ եթ Սեաջնորդութիւն կայ որ կը տիրէ բոլոր այդ վիճակաց: Ասեջնորդանիստն է Իւջ-Քիլիսէի Ս. Յովհաննու մեծահոգեակ վանքը, եւայժմու Ասեջնորդն է Գեր. Յովհաննէս վարդապետ Տ. Աստուածատուրեան, որոյ նման ժողովրդասէր, անձնուրաց, անխոնջ եւ անշահասէր հովիւ դուն

ուրեք կը տեսնուի ի դաւառս, որպէս սասկաւուց տրուած է վայելել այնքան համակրութիւն եւ սէր իրենց ժողովրդէն: Վերջին պատերազմին ժամանակ այս անձնուրաց հովիւին իւր հօտին համար քաջած նեղութիւններն եւ երկու բանակաց ու թըշնամեաց միջեւ բռնած իմաստուն եւ ժողովրդաշահ ընթացքն եւ արիական վարմունքն ամէն գովեստէ վեր են, որպէս եւ մինչեւ ցարդ իւր ունեցած հոգ եւ խնամքը իւր ժողովրդին վրայ:

Ս. Յովհաննու վանքը ոչ միայն իւր անցեալ փառքերով, հիմնադրին համբաւով եւ այնքան նուիրակոսն յիշատակներովը գերազանցեալ մի վանք է, այլ եւ իւր նիւթական շինութեան աննման հոյակապութեամբն եւ շքեղութեամբն: Ոչ Ս. Կարապետ, ոչ Վարագ, ոչ Ս. Բարթողիմէոս, ոչ Քաղցրահայեաց ու Բարձրահայեաց վանքերն, ոչ Աղթամար, Նարեկու լիւմ եւ Կոռց անպատներն եւ ոչ Եկեղեաց, Մշոյ, Քարբերդի եւ վանքերը, զորս տեսած եմ, սորա տաճարի նման հոյակերտ եւ բարձրակառոյց տաճարներ ունին: Եթէ Ռուսաց Վլատիմիր թագաւորի նման մէկը կրօնք մը ընտրել ուզելով կրօնից տաճարներն դիտելու համար հետազօտներ խրկէր, ընդունիլ որոշելով կրօնն որոյ նուիրեալ տաճարն ամենէն հիասքանչ եւ զարմագործ լինէր, անշուշտ պիտի ընդունէր Ս. Վասաւորչի եկեղեցւոյն պատկանող այս տաճարին մէջ փառաբանուող կրօնքը, եթէ առիթ ներկայանար սակայն հետազօտել եւ այս կողմի եկեղեցիները եւ եթէ ստոյգ է Վլատիմիրի ընծայեալ այս գործը եւ այս օրինակ հաւատախնդրութիւն ու հաւատքնկալութիւնը:

Այս հիատեսիլ վանքը բաց ի իւր տաճարէն չ'ունի սակայն ուրիշ ո՛ր եւ է շքեղութիւն, հարստութիւն եւ ո՛չ ալ շինութիւն: Բոլորն ալ ողողւած են վերջին պատերազմին ժամանակ: Եւ եթէ տաճարն չէ քանդուած, պատճառն այն է որ բանակ մը զօրաց ամիսներ աշխատելով հազիւ կարողանար յաջողիլ առ այդ: Այնչափ որ ամուր եւ անխախտ է տաճարս համակ քարակուռ, համակ քարաշար եւ երկաթի ու կապարի նիւթերով ու ձողերով քար ընդ քարինս շրջաթալ:

Վերջին պատերազմն և ռուսական արշաւանքն ոչ միայն պատճառեց Պայագիտու, Բադրեւանդայ եւ Բասենու ժողովրդոց, մասնաւորապէս Հայոց, անհնարին կորուստ եւ թշուառութիւն նիւթական, այլ եւ բարոյական եւ հոգեկան, զի Ռուսաց զաւուսը քաղաքակրթութեան մրուր եղող մոլորութիւններ հեղեղեց նոցա մէջ, եւ ողորկելով տարաւ փճացուց նոցա նահապետական նախնի բաղում առաքինութիւններ, բարոյական, հոգեկան, կրօնական, ընկերային եւ քաղաքային և և. եւ այս կորուստ ու մլասն աւելի եւս է եւ անդարմանելի եւ անփոխարինելի: Լեզուի, սովորութեանց, զգեստուց, տարազի եւ կենցաղավարութեան մասին եւս յաւէտ կամ նուազ իւր հետքը թողած է այս ժողովրդի մէջ ռուսական գրաւումը. զգալի է ամենէն աւելի տարազուց մէջ, որ Թուրքիոյ արեւելեան միւս գաւառաց մէջ ամենեւին չտեսնուիր: Արարատեան բարբառի յայտարար նշանը «ճ լծորդութիւնն ալ կը լսուի ուրեք ուրեք այս գաւառաց մէջ:

Կրթական տեսակէտով ամենեւին առաւելութիւն չ'ունին ուրիշ գաւառացւոց վերայ, եւ պատերազմին ատեն իրենց քաշած նեղութիւնները յաճախ պատրուակ կը բռնեն իրենց անտարբերութեան եւ անգործութեան եւ իրաւունք մը վաստկած կը համարին արտաքին օգնութիւններ ըստանալու:

Այս գաւառաց, որ միացեալ են մէկ Առաջնորդութեան ներքեւ, ճշդիւ յայտնի չ'է ստոյգ թիւը Հայ ժողովրդեան. բայց ընդհանրապէս կը կարծուի թէ պատերազմէն առաջուանին կէսէն աւելին պակասած են:

1886 Մուշ

ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ

ՆՈՐԱՎԷՍ

ԿՆՈՋ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԷՆ

ԳԱՂՈՒԱԾ

Յունուարի մէջ էինք, առաջի օրը բաւական ձիւն եկած էր, մեր դիմացի լեռները սպիտակ խորհրդաւոր պատանով մը ծածկուած էին, եւ դաշտին մէջ կանաչազարդ մայրիներն ու նոճիները շիրիմներու վրայ սփռուած անթառամ ծաղկանց պըսակներու կը նմանէին: Երկինք մութ էր և տխուր, մերթ ընդ մերթ խոշոր ձիւնի հատիկներ օդին մէջ ոլորապտոյտ կը չընէին, հովը կը սուրար, եւ մերկ ծառոց ձիւղերը կը թօթուէր, ուստի առատ ձիւն կը թափէր գետինը:

Վառարանին մէջ չոր փայտերու դէզ մը ճարճատմամբ կը վառէր, եւ լուսաւոր բոցեր կ'արձակէր սենեկին մէջ: Դաշտին վրայ նայող պատուհանին մօտ, նստած էի լայն թեւաթուռի մը մէջ, անհուն տրտմութեամբ համակեալ: Կը դիտէի բնութիւնը, կը դիտէի ձիւնն եւ սիրտս կը սառէր: Ինձ կը թուէր թէ իւրաքանչիւր ձիւնի հատիկ չարագոյթ լուր մը կը բերէր ի վերուստ, ողբազին ձայն մը կը լսէի որ կը մրմնջէր ականջիս թէ երբէք այն սեւ երկինքը չ'ալիտի պայծառանայ, այն մեռած երկիրը չ'ալիտի կենդանանայ եւ զուարթութիւն չ'ալիտի ըզգենուն ո՛չ բնութիւնն, ո՛չ դաշտերն և ո՛չ փշտաբեկ սիրտս . . .

— Ո՛հ դարձեալ կը տքնիս ստոյիկեան փրկիւփայութեան խորը թափանցել, ըսաւ յանկարծ ծաղրաբար հնչուն ձայն մ'որ ինձ անծանօթ չ'էր, եւ փոքրիկ ձեռք մը մըտերմօրէն ուսիս զարկաւ:

Ետիս դարձայ. Մատեն բարեկամուհւոյս թարմ ու շնորհալի դէմքը, որ ժպտելով ինձ կը նայէր, փարատեց տխուր խորհրդածութիւնքս. ոտքի ելայ ու ջերմազին համբուրեցինք զիրար:

— Բարի եկար, սիրուն Մատենս, ըսի, որքան շնորհապարտ եմ քեզ որ օդին ցըրտութեան շնայելով կուգաս մխիթարել զիս

եւ առանձնութիւնս զուարթացնել . մի-
նակ ես :

— Ոչ, մայրիկիս հետ եմ, նա չուզեց
գալ ցուրտին համար, բայց ես գիտնալով
որ չես սիրեր ձիւնն եւ կը դիտես երբ ա-
ռանձին ըլլաս, շատ պնդեցի որ դանք :
Արդ, իրաւունք ունիմ քեզմէ պահանջելու
որ այդ սգազգեսաց դէմքդ շտկես, ու զը-
ւարթորէն խօսակցինք : Ուրախ լուրեր կը
բերեմ քեզ :

— Ուրախ լուրեր, ըսի, շուտ պատմէ
տեսնեմ, միթէ խնդիրը քու վրա՞նք է դար-
ձեալ, միթէ խնդիրը վերջապէս տարօրինակ
որոշումը :

— Որոշումս խզել, գոչեց նա ծիծաղե-
լով, այնքան թեթեւամիտ աղջիկ չեմ ես,
սխալ կարծիք ունիս վրաս, սիրելիս :

— Լըջօրէն կը խօսիս, թէ կատակ կ'ը-
նես, Մատլէն . գիտե՛ս թէ այդ յամառու-
թիւնդ սուղի պիտի նստի քեզ : Մայրդ ալ
պէտք է մտածես :

— Մայրս շատ գոհ պէտք է լինի . փո-
խանակ զինքը թողլով ուրիշի մը հետ ապ-
րելու եւ կեանքս, սիրտս ու պարտակա-
նութիւնքս անոր նուիրելու, ես իրեն հետ
պիտի ապրիմ մինչեւ ցմահ : Միթէ յանցանք
է այս :

— Յանցանք չէ, սիրելիս, բայց ամուս-
նութիւնը չ'արգիլելը քեզ մայրդ սիրելէ, և
ամուսնական պարտականութեանցդ հետ,
կրնաս նաեւ որդիական պարտքերդ ալ կա-
տարել, կրնաս մօրդ քով ապրիլ ամուսնոյդ
հետ :

Վերջապէս, Մատլէն, զիս չես կրնար
խաբել, անպատճառ գաղտնիք մ'ունիս դու,
գաղտնիք մ'որ խեղճ փոքրիկ սիրտդ կը
հիւծէ, գաղտնիք մ'որ բուն պատճառն է
որոշմանդ : Մարդու շէտ հաղորդեր գայն,
թերեւս պղծելէ կը վախնաս, թերեւս վըս-
տահութիւն չ'ունիս բարեկամացդ վրայ .
բայց գիտցած եղիր, գէշ բան է այդ : Ի՞նչ
պիտի ընես վերջապէս, ո՞ւր պիտի երթայ
ադոր ծայրը : Մինչեւ հիմա իրարմէ ծա-
ծուկ ոչինչ ունէինք, չունէիր մտածում մը
որ ինձ չ'աւանդէիր, այլ հիմա խորհրդաւոր
էակ մը դարձած ես եւ ամեն բան ինձմէ
կը ծածկես :

Մատլէն լուռ կը կենար, տխրութեան
ամպ մը անցած էր իւր սովորաբար զուարթ

ճակտուն վրայէն, եւ աչերը գետինը սե-
ւեռած կը մտածէր :

— Խոստովանութիւն մը կը պահանջես
ինձմէ, ըսաւ, եւ իրաւունք ունիս . քեզ որ
հաղորդ ըրած եմ ամեն խորհրդոցս, քեզ
միայն կրնամ խօսիլ այս խնդրոյն վրայ :

Ենթադրածէդ շատ տարբեր է իմ գաղտ-
նիքս, եւ ցաւս ալ . թէ եւ սրտի ցաւ չէ,
բայց դարման չ'ունի : Վստահ եմ գաղտ-
նապահութեանդ վրայ, միայն թէ կը վախ-
նամ որ օր մը բնութիւնդ կը փոխես, եւ
ինձ ծառայութիւն մ'ընել կարծելով զիս կը
մատնես :

— Ես քեզ մատնեմ, ուրեմն կը կաս-
կածի՞ս բարեկամութեանս վրայ, գոչեցի
սրտմտած . չ'էի սպասեր այդ խօսքիդ,
Մատլէն :

— Ո՛հ ներէ, սիրելիս, վրայ բերաւ նա,
տղայական ենթադրութիւն մ'էր ըրածս,
մի՛ սրտողիր :

Բայց տեսնելով որ սաստիկ վշտաբեկ
չ'էի պատասխաներ, յաւելցուց .

— Եթէ քեզ նկատմամբ ունեցած բա-
րեկամութեանս մէկ ապացոյցը տալու հա-
մար, մինչեւ ցարդ մէկու մը չ'ըսածս այժմ
քեզի ըսելու ըլլամ, պիտի ներե՞ս ինձ :

Հարստատական նշան մ'ըրի :

— Ուրեմն մտիկ ըրէ, ըսաւ Ժպտելով :

Տասն և ինը տարեկան էր Մատլէն, գե-
ղեցիկ կնոջ մ'ամեն հրապոյրովն եւ հրեշ-
տակի մ'ամեն անմեղութեամբ . եթէ Բեթ-
րաբըլ ժամանակ աշխարհ եկած ըլլար նա,
թերեւս կարենար մրցիլ գեղանին Լօրաի
հետ : Թխաթոյր էր եւ հրաչեաց, իրական
տիպարն Եւրոպացոց երեւակայած . արե-
ւելեան հուրինեւրուն, որք դիւթական պար-
տէզներու մէջ, պղտլակ կոհակին վրայ գըլ-
խիկոր, կը դիտեն իրենց սեւ հոպոպիքներուն
օգային ծածանումները թափանցիկ ջուրին
մէջ :

Մատլէն սրտի եւ մտաց ազնիւ յատկու-
թիւններ ունէր, եւ իւր դաստիարակու-
թեան մեծ խնամք տարուած էր : Առաջին
անգամ զինքը տեսնողը թերեւս կարծէր
թէ փոքր ինչ թեթեւամիտ է նա, բայց
միայն զուարթութեան էր, եւ յաճախ կը ծի-
ծաղէր մանկան մը պէս . այսու խոհական
աղջիկ մ'էր :

Երկու տեսակ բնութիւն ունէր այդ սի-

րուն էակը, մին ժպտուն, խօսուն ու թըր-
թըրուն, միւսը լուրջ, տրտում եւ մտածող:

Առաջինն ընկերութեանց մէջ կը փայ-
լեցնէր, իսկ երկրորդն իւր սենեկին խորը
քաշուած ինձ հետ մտերմութենէն խօսած մի-
ջոցին երեւան կը հանէր:

Շատոց ի վեր գիրար կը ճանչնայինք, եւ
իբրեւ երկու քոյր սէր ունէինք միմեանց
վրայ, միայն թէ նա զիս մեծ քրոջ տեղ դը-
րած էր:

Փաղտնապահ չէր Մատլէն, եւ մտքէն
անցածն ու չ'անցածը կ'ըսէր ինձ:

Նախ իւր խաղալիքներու եւ կաղանդ-
չէքներու պատմութիւնը մտիկ ըրած էի,
յետոյ դասերուն, ըրած յառաջագիտու-
թեանց եւ դաստիարակներուն յանդիմա-
նութեանց. վերջապէս եկած էր տարիք մը
ուր բոլորովին տարբեր բաներու վրայ խօ-
սած էր նա ինձ: Մանկութիւնը հեռացած
էր իրմէ հետը տանելով իւր ունայն այլ սի-
րելի գուարճութիւնները եւ տասն եւ վեց
տարեկան աղջկան սիրտը խաղալիքներու
համար այլ եւս չէր բարախեր:

Վարդագեղ երկնի մը վրայէն կ'ընդունը-
մարէր նա անհուն զգացումներ, ոսկեշող
յոյսեր. անիմանալի, խորհրդաւոր բառեր
կը բզզային իւր ականջին, եւ աննման դաշ-
նակութեան մը պէս կը յուզէին իւր հո-
գին. վերջապէս Մատլէն սկսած էր սիրոյ
վրայ խորհիլ առանց զայն ճանաչելու:

Սիրելի էր ինձ լսել նորա թարմ մտքին
նորածին գաղափարներն, անարատ հոգւոյն
վարդածիլ յոյսերն եւ անմեղ սրտին ջերմա-
գին ուխտերը:

Փանի մեծնար Մատլէն, իւր շնորհը կ'ա-
ւելնար, եւ իւր մայրն ուրախութենէն կը
թրթռար տեսնելով զայն՝ այնքան սիրուն,
այնքան բարի եւ այնքան առաքինի . . .:

Մէկ մ'ալ յանկարծ Մատլէն սովորակա-
նէն աւելի խոհուն սկսաւ երեւիլ. ալ չէր
խօսեր ինձ իւր պարողներուն վրայ, փայլ-
փլուն յոյսերուն վրայ չէր փառաւորուեր,
ապագային համար սպանիական դղեակներ
չէր չիներ:

Երբ պատճառը հարցնէի կ'առարկէր թէ
սխալած եմ եւ թէ ինքը միշտ միեւնոյնն է:

Շատեր մինչեւ ցայնփամ իւր ձեռքը
խնդրած ու մերժուած էին, քանզի իւր
ծնողքն որք պատուաւոր եւ հարուստ մար-

դիկ էին, դեռ շատ մատաղ կը կարծէին
զինքն այդ բարձր կոչման արժանանալու
համար:

Բայց վերջապէս եկաւ օր մ'ուր նոքա
հաճեցան ամուսնացնել իրենց աղջիկն ըն-
տիր երիտասարդի մը հետ, մարդկան լա-
ւագոյնն եւ սրտերու մարդարիտը:

Երկու կողմէ ամէն ինչ կարգադրուած
էր, կը մնար միայն Մատլէնի հաւանու-
թիւնն առնել, եւ այդ պաշտօնն ինձ յանձ-
նուեցաւ: Սիրտ ի տրուի դիմեցի բարեկա-
մուհւոյս սենեակին եւ նորա գիրկը նետ-
ուելով բուռն շնորհաւորութեանց մէջ խեղ-
դեցի զայն, այլ որքա՞ն մեծ եղաւ զար-
մանքս երբ նա զիս ետ մղելով աղաչեց որ
իսկոյն իմացնեմ իւր ծնողաց թէ ինքը բը-
նաւ չուզեր ամուսնանալ: Մատլէն իւր կա-
տարեալ պաղարիւնն կը պահէր սոյն միջո-
ցին եւ որ եւ է յուզում իւր ձայնը չէր
դողացներ. միայն փոքր ինչ դժգոյն էր և
տխուր: Շատ ջանացի զինքը համոզել եւ
մերժման պատճառն իմանալ, բայց ի զուր,
հարցմանցս եւ պաղատանացս խուլ, կը
հրամայէր ինձ որ անյապաղ իւր որոշումը
ծնողացն յայտնեմ:

Այս տխուր լուրը շատ տխրեցուց խեղճ
ծնողքը, մանաւանդ ապագայ խօսնայրը:
Անցան մէկ քանի ամիսներ եւ այն կարճ
ժամանակամիջոցին Մատլէն հինգ վեց ըն-
տիր միութիւններ եւս մերժեց միեւնոյն
յամառութեամբ. իւր հայրը սկսած էր
բարկանալ եւ մայրը վշտագնել, ամէն ոք
կը կարծէր թէ գաղտնիք մ'ունի նա, ա-
նարժան սէր մ'որ չուզեր երեւան հանել,
ես ալ այնպէս համոզուած էի, բայց ինքն այդ-
պիսի բան մ'ինձ ըսած չէր երբեք: Մայրը
շատ կ'աղաչէր որ կորզեմ աղջկանը բերնէն
այդ գաղտնիքը: Խեղճ կինը որքա՞ն կը
տառապէր մտածելով թէ իւր վարդագեղ
դուստրն օր մը պառաւ աղջկանց տխուր
ճակատագիրը պիտի ունենայ:

Շատ կ'ստիպէի Մատլէնը, չափ կը յան-
դիմանէի, շատ կը սրտմտէի իրեն դէմ,
բայց ի զուր, արձանի պէս լուռ կը մնար
նա միշտ:

Սիրտս սաստիկ նեղացած էր այդ կա-
մակոր աղջկան դէմ, եւ ուխտած էի հետը
սրբողիլ, այն օրն իսկ ուր նա ինձ այցե-

լուծեան գալով, հրաշիւք յանձն առաւ իւր պատմութիւնն ընել :

Ինչպէս արդէն ըսի, շատ ցուրտ կ'ընէր, Մատլէն աթոռը վառարանին մօտ քաշեց, ես ալ իւր քովը նստայ եւ իւր փոքրիկ ձեռքերն իմիներուն մէջ սկսաւ նա իւր խոստովանութիւնն. ուրախութենէս ու հետաքրքրութենէս կը թրթռայի :

— Ծնողացս մօտ շատ երջանիկ եմ ես, ըսաւ, եւ չեմ ուզեր վրդովել այս հանգարտիկ երանութիւնս : Ամուսնութիւնն ինձ համար չունի որ եւ է հրապոյր, եւ կարծեմ ամեն անոնք որ կը տենչան զիս անպատճառ կարգել, ցանկացող են թշուառութեանս :

— Յիմարակա՛ն գաղափար, ընդմիջեցի :

— Խօսքս մի՛ կտրեր, շարունակեց նա. ես ալ ժամանակ մ'այսպէս չէի մտածեր. ընդհակառակն իմ սուրած շրջանակէս դուրս կ'երեւակայի տիեզերք մ'անհուն բարօրութեամբ եւ գերմարդկային երանութեամբ զեղուն, աշխարհ մը գիւթական, մթնոլորտ մը լուսափայլ ուր կը տենչայի բնակել հոգւոյս եւ սրտիս ամէն զգացմանց ամէն ներշնչմանց հաղորդ էակի մը հետ : Անային բոլոր ունայնասիրութիւնս, նորատի աղջկան բոլոր պճնասիրութիւնս, մարդոց առջեւ փայլելու ջերմ փափաքս, ամենուն զմայլման արժանանալու բոլոր ջանքերս պիտի փարատէին այն ոսկեշող աստղին ճառագայթներուն առջեւ որ կը կը կոչուի Սէր : Ընտանեկան յարկն ինձ համար խորան մը պիտի ըլլար զոր պիտի զարդարէի մշտադաւար ծաղիկներով : Հզօրադոյն կամը մը կ'զգայի որ զիս կարող պիտի ընէր ամէն բան թողնով բոլորովին անձս իմ փոքրիկ ընտանեացս նուիրելու եւ ամուսնոյ մ'երջանկութիւնն հայթայթելու : Եւ կ'ենթադրէի այդ ամուսինն որ խնամոցս, բոլոր յարգանացս, բոլոր սիրոյ սպիտի արժանանար, խոհուն եւ զգայուն, սիրտը սրտիս միաբան, հոգին հոգւոյս համապատասխան : Մէկ ճիւղի վրայ երկու վարդի կոկոն պիտի ըլլային, մին առանց միւսին չպիտի կարենար ապրիլ, միմեանց շնչած օդով պիտի սնանէին եւ յամենայնի համամիտ, յամենայնի համակամ, զոյգ մը տատարակի պէս զուարթօրէն պիտի անցնէին. այս դառնութեանց հովտին վրայէն :

Ո,յն ատեն, սիրելիդ իմ, այն ատեն երկնից հրեշտակներն ինձ պիտի նախանձէին :

Մատլէն լռեց, երկար բերուն մէջէն կը փայլիէր արցունքի խոշոր կայլակ մը :

— Ի՛նչ անհուն տարբերութիւն իտէականին եւ իրականին մէջ, վրայ բերաւ նա, ի՛նչ մեծ ցաւով տեսայ կառուցած ոսկեղէն մեհենիս քայքայուիլը, որքա՛ն արցունք թափեցի : Գեղեցիկ պատկեր մը պարզեցի աչացդ առջեւ, այժմ այդ պատկերին հակառակ կողմը պիտի ցուցնեմ քեզ :

Ինչպէս որ գիտես զիս ընկերութենէ հեռի մեծցուցած են. թէեւ հայրենի տան մէջ, բայց ծնողքէս զատ գրեթէ ոչ ոք կը տեսնէի մինչեւ տասն եւ հինգ տարու :

Աշխարհային իրերու վրայ շատ հարեւանցի գաղափար մ'ունէի եւ ամէն ինչ կրակոտ երեւակայութեան համեմատ կ'ենթադրէի : Երկու երեք տարի կայ որ ակըմբոց մէջ կը մտնեմ, եւ տեսութիւն կ'ընեմ տիկնանց եւ օրիորդաց հետ. առանց նոցա մտերմութեան արժանանալու նորընծայութեանս պատճառաւ, կը տեսնեմ կանայք իրենց ամուսնոց հետ ժպտուն, զուարթուն եւ երջանիկ կը կարծեմ զանոնք, կը տեսնեմ աղջկունք իրենց նշանածին հետ եւ երանութեան ճամբուն մէջ կը համարեմ զանոնք, բայց աւա՛ղ որքան սխալ եմ եղեր :

Ահաւասիկ ապացոյցը : Կը ճանչնաս մօրաքրոջս աղջիկը Եւգինէն, ի՛նչ գեղեցիկ եւ բարեկիրթ աղջիկ է. քանի քանի անգամներ մեր երազներն իրարու պատմած ենք, որքա՛ն դաղափարակից էինք ամեն բանի մէջ, ի՛նչ բարձր իտէական մ'ունէր նա ամուսնութեան վրայ :

Անցեալ տարի կարգեցին զայն Հ... էֆէնտիի հետ, որ ամենուն յարգանաց արժանացած եւ հարուստ կարծուած երիտասարդ մ'է : Ինքը սիրահարած կը թուէր Եւգինէին եւ շատ ուրախացաւ երբ զայն իրեն կնութեան տալ հաճեցան :

Եւգինէ շատ զգայուն է. նշանած ատենը երկնային յոյսեր կը սնուցանէր սըրտին մէջ, եւ շողողուն ապագայ մը կ'երագէր : Հէ՛ք աղջիկը վերջապէս ամուսնացաւ : Առաջին մէկ քանի ամիսները երջանկութենէն կը թրթռար, բայց վերջերս ատեն ատեն տխուր էր եւ ես չէի կրնար դուշա-

կեւ նորա վշտին պատճառը, քանզի աղջիկ մը չէ կարող հարցաքննել ամուսնացեալ կին մը որքան որ ալ մտերիմն ըլլայ :

Անցեալները օր մը մեզ եկաւ Եւգինէ եւ զիս միասին իրեն տարաւ : Գիւղն էին : Ամառուան մէջ էր, օդն ալ սքանչելի : Աղուոր գիւղեր մը նա ուզեց որ երթանք լուսնի լուսնով չըմագայութիւն մ'ընենք, նախ զիս պարտեց զրկեց եւ ինքն ալ չալ մ'առնելով պիտի գար ինձ միանալ : Գացի տան դրան մօտ նստարանի մը վրայ նստայ, եւ անուշաբոյր զեփիւռին քաղցրիկ շունչէն օրօրուած կը դիտէի երկինքն աստղազարդ եւ անընդ թեւերուն վրայ հոգիս կը սաւառնէր դէպի գնդերն այն լուսափայլ, երբ յանկարծ բարձրաձայն խօսակցութիւն մ'ականջիս զարկաւ : ահամայ ոտքի ելայ եւ մտիկ ըրի :

Եւգինէի ննջասենեակը լոյս կար, եւ ձայնն ալ անտի կուգար : Հ . . . էֆէնտի կը պօռար, խեղճ կինը ջանար անոր ցասում մը մեղմել : ուզեցի հեռանալ, բայց անհնար եղաւ, դաժուած մնացեր էի հոն եւ անոնց խօսքերը մի առ մի ինձ կուգային բաց պատուհանէն :

— Կ'աղաչեմ լուէ', կ'ըսէր Եւգինէ, այժմ ադոր ժամանակը չէ :

— Թշուառական, կ'որոտար իւր ամուսինը, եթէ այս վայրկեանիս ձեռքս չիտաս այդ մատանին կը խեղդեմ զքեզ :

— Բայց . . . մօրս յետին եւ միակ յիշատակն է այն . . . կը կակազէր Եւգինէ արտասուազին :

— Ինչ ըսել է յիշատակ, կը գոչէր այրը՝ ոտքը գետինը զարնելով, դու կոյր հընազանդութիւն կը պարտիս ինձ, եւ երբ ես ըսեմ թէ այս բանը կ'ուզեմ, առարկութիւն մտիկ չեմ ընել : Կուտամ թէ ոչ, չուտ ըսէ տեսնեմ :

Հէք աղջիկը պատասխան չէր տար եւ մերթ ընդ մերթ հեծկլտանք կը լսէի : աշնան տերեւի մը պէս դողդոջուն, պատուհանին երկաթները կը բռնէի չիյնալու համար : վայրկեանական լուսթենէ մը յետոյ Հ . . . էֆ. կատաղաբար սկսաւ գոչել :

— Պատասխան տուր, անգգամ կին, որպէս զի ընելիս գիտնամ :

Սպառնալեաց այնպիսի վայրի շեշտ մը կար իւր ձայնին մէջ որ սարսափեցայ :

— Ուզէ ինչ որ կ'ուզես, համարձակեցաւ ըսել Եւգինէ պաղատալից, արիւնս, հոգիս, ամէն բանս, բայց մի՛ զրկեր զիս մօրս քաղցր յիշատակէն : օրհասական անկողնոյն մէջ ինձ տուաւ զայն, խեղդելով որ սրտիս վրայ պահեմ միշտ . . . եւ արտասուք խեղդեցին թշուառ կնոջ ձայնը :

— Անիծեալ ըլլաք, դու ալ մայրդ ալ, որոտաց այրը եւ յանկարծ մարմնոյ մ'անկման ձայնն եւ հարուածներու աղմուկը, մռնչիւններու հետ խառնուած, օդին լուսթիւնը վրդովեցին : Ծունկերս կ'թոտեցան եւ անզգայ ինկայ :

Գիշերային զովութեան շնորհիւ չուտով սթափեցայ : անխօս անմուռնչ գացի պառկելու եւ մինչեւ առաւօտ կրնաս երեւակայել որպիսի բարոյական տանջանքներ կըրեցի . . . :

Առաւօտուն կանուխ սենեակս եկաւ Եւգինէ, մեռելի պէս դժգոյն եւ հերարձակ : ճակտուն վրայ ահագին վէրք մ'ունէր, աչերը ուռած եւ կարմրած էին : Զկրցայ ինքզինքս զսպել եւ արտասուազին իւր թեւերուն մէջ նետուեցայ :

Յայնժամ Եւգինէ պատմեց ինձ ամէն բան : Այն սիրահարութիւնն, այն անոյշ դորովն, այն ասպետական անձնուիրութիւնը որ Հ . . . էֆէնտի կը տածէր իւր գեղանի նշանածին, բոլորն ալ կեղծիք են եղեր, եւ հարստութիւնը միայն շարժառիթն եղած է այդ միտ թեան : Ո՛հ, քանի դիւրին է անմեղ աղջիկ մը խաբել :

Հարսնիքէն քիչ վերջը երեւան ելեր է այս խաբէութիւնը եւ հէք կինը կը տոկայ եղեր ամէն բանութեանց առանց տրտնջելու : Իւր աղամաններն ու պաճուճանքը ձեռքէն յափշտակուելով այլոց ընծայ տըրուեր են, եւ այժմ մօրաքրոջս տուած գեղեցիկ մէկ մատանին որ մեծ արժողութիւն ունի, այդ բաղդին արժանացեր է : այլ որովհետեւ Եւգինէ շատ կը սիրէր այդ աղամանդը, նախ չէ ուզեր անարժան ձեռաց յանձնել զայն, եւ մէկ քանի հարուած ուտելէն վերջը միայն յանձն առեր է տալ :

— Ո՛հ, գոչեց տարաբաղդ մօրաքրոջ դուստրս, ի՛նչ կ'երեւակայէի, եւ ինչ է եղեր ամուսնութիւնը : արքայութիւն կը կարծէի բայց տեսարան մ'է ուր դատապարտուած ես սիրել մարդ մ'որ ծանր

կշտամբանօք միայն կը վարձատրէ սէրդ ,
հաւատարմութիւնդ եւ անձնութիւնդ :
Ա՛հ , Մատլէն , Մատլէն , չըլլայ որ ամուս-
նանաս : »

Այն վայրկեանէն լմցած էր ինձ համար
ամէն բան . ասլրիլի առաւօտեան մէզին
պէս , մէկ վայրկեանի մէջ փարատեր էին
հոգւոյս համայն երազներն , եւ իտէակա-
նէն իրականին անցեր էի : Ահա ասոր հա-
մար , երբէք չպիտի կարգուիմ , սիրելիս ,
երբէք . . . :

Եւ Մատլէն , գրգռեալ , մեծաքայլ կը
չըջէր սենեկին մէջ :

Այժմ 32 տարեկան է նա , միշտ գեղե-
ցիկ եւ միշտ հաստատ իւր որոշման վրայ :
Ի զուր կը ջանամ հասկցնել իրեն թէ ամէն
մարդ միեւնոյնը չ'է , եւ եթէ կան ճիւղա-
ներ կան նաեւ բազմաթիւ հրեշտակներ :

— Ո՛հ երբէք , կ'ըսէ միշտ , երբէք չպի-
տի ամուսնանամ :

Աւա՛ղ քանի ճմարիտ է այն առածն որ
կ'ըսէ . « Մէկ չարն հազար բարւոյն անունը
կ'աղարտէ : »

* * *

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Տ Ա Ղ

ՎԱՍՏԵ ՌԻՐԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԻԿԱՆ

ՅԱՇԸԳ ՍՕՂՊԱԹԷ

Այբն ասէ առաքեցար հազար բարի ,
Բէնն ասէ բարի հարիւր հազար բարի ,
Գիմն ասէ գաւաթ մը խմէ իմ սիրելի :

Այբն ասէ առաքեցար հազար բարի ,

Դան ասէ դու սիրելի մեզ ըզձայի ,
Եջն ասէ իշար ւ'եկար առ մեզ հիմի ,
Ջան ասէ մեզ սիրելի յոյժ պատուելի :

Այբն ասէ եւն .

Էն ասէ էակ՝ առ քեզ հոգւով ի լի ,
Ըկթն ասէ ընդ քո սիրելի ուրախելի ,
Թօն ասէ թող դու ապրիս բազում տարի :

Այբն ասէ եւն .

Ժէն ասէ ժամանակաց դու գովելի ,
Ինին ասէ քեզի եկար հոգւով ի լի ,
Լիօնն ասէ լոյսն երկնային ի քեզ հանգչի :

Այբն ասէ եւն .

Խէն ասէ խմէ զբաժակ որ քեզ պիտի ,
Ծան ասէ ծծէր ծառայս նաւն աւելի ,
Կէն ասէ կարաս բանամ բիրիւմ գինի ,

Այբն ասէ եւն .

Հօն ասէ հոգւով զքեզ սիրել պիտի ,
Չան ասէ ձայնով գոչեմ քեզ երանի ,
Ղատն ասէ զամպարն արաւ մեզ արծանի :

Այբն ասէ եւն .

Ճէն ասէ ճայտ ու ծառայ զանձն ի մարի ,
Մէնն ասէ մեծարեցիր զինչ որ չէի ,
Յին ասէ յեղար ւ'եկիր առ մեզ տեսի ,

Այբն ասէ եւն .

Նուն ասէ նոր ամանով խմել պիտի .
Շան ասէ շիշան ի յիմ ձեռքս առի ,
Ոն ասէ որ քո ծառայս նոր զբաղի :

Այբն ասէ եւն .

Չան ասէ չար թշնամին թող խուարի ,
Պէն ասէ պտաիւ պարտիմ իմ պարոնի ,
Ջէն ասէ ջուր ու գինի շատ կու լինի ,

Այբն ասէ եւն .

Ռան ասէ ուարբին երես (*) զքեզ ինձի ,
Սէն ասէ սուրբ գաւաթով խմել պիտի ,
Վեւն ասէ վեց վեց ու վեց մէկ հետ մեկի :

Այբն ասէ եւն .

Տիօնն ասէ տուր իս խմեմ մէկ մի քանի ,
Բէն ասէ բամեալ մարդկան մեծաց աղբի ,
Յօն ասէ ցնծամք ամենքն յոյժ խնդի :

Այբն ասէ եւն .

Խիւնն ասէ հիւր ընկալար զմեզ բարի ,
Փիւրն ասէ փառք եւ պատիւ իմանալի ,
Քէն ասէ քո ծառային Մարտիրոսի :

Այբն ասէ առաքեցար հազար բարի .

Հ . ԷԿԻՆԵԱՆ

(*) Շատ տեղ հին գեղարդոյ մէջ երեւր կը գտ-
ծին փոխանակ ետի :

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐՔ

ԹԻԻ 6.	(Մասի Թիւ 3798)
» 15.	» » 3807)
» 16.	» » 3808)

ԽՆԴԻՐ

ԹԻԻ 17.

Տանս Թիւը եօթն ստորապատիկներ (sous-multiples) ունի առանց հաշուելու միութիւնը: Մեծութեան կարգաւ չորրորդը, Թիւն 16 ին հաւասար է: Ո՞ր Թիւ տան մէջ կը բնակիմ:

ԹԻԻ 18

Երկայնահեռ ուղղանկիւն խորանարդի (parallépipède rectangle) մը ծաւալը հաշուել, որուն մակերեսը Թիւ հաւասար է 3 քառակուսի մէթրօի եւ որոյ զատութիւնը (dimensions) համեմատական են 4, 6 եւ 9 Թիւերուն:

ԽՆԴԻՐ ԹԻԻ 14

ԼՈՒԾՈՒՄՆ

10. Նախ դիտենք Թէ խնդրուած տարին կը վերաբերի ներկայ դարուս, ըստ որում անցելոյն մէջ ծնող մարդ մը կ'ունենայ աւելի քան 87 տարի որոյ $\frac{2}{5}$ ն է 56 ինչ որ չկրնար ներկայացնել չորս Թուանշաններու գումարն:

Ուրեմն ծնողեան տարւոյն առաջին երկու Թուանշաններն ծանօթ են մեզ որք են 1 եւ 8: + կոչենք տասնաւորաց եւ $\frac{1}{5}$ միաւորաց Թուանշաններն զորս չենք գիտեր: Հետեւեալ հաւասարութիւնը կ'ունենանք.

$$9 + + + \frac{2}{5} = \frac{2}{5} (1886 - 1800 - 10 + - \frac{1}{5}) \text{ յորմէ}$$

$$23 + + \frac{3}{5} = 145 \text{ եւ}$$

$$\frac{1}{5} = \frac{145 - 23 +}{5}$$

Արդ $\frac{1}{5}$ ամբողջ Թիւ մ'ըլլալով, քանի որ համարիչին առաջին մասը 145 բաժանական է 5 ուլ բն եւս 23 +, սլարտի 5 ուլ բաժա-

նական լինիլ. եւ որովհետեւ 23 նախնական Թիւ մ'է + բաժանական է 5 ուլ եւ կամ հաւասար 0 ի. բայց $\frac{1}{5}$ եւ + միաւոր Թիւեր են որով $+ = 0$ անկարելի է. ուրեմն $+ = 5$ զոր $\frac{1}{5}$ արժէքին մէջ դնելով, $\frac{1}{5} = 6$: Մենդեան տարին է հետեւաբար 1856:

20. Նոյնպէս կը դտնենք հետեւեալ հաւասարութիւնը.

$$9 + + + \frac{1}{5} = 1886 - 1800 - 10 + - \frac{1}{5} \text{ յորմէ}$$

$$11 + + \frac{2}{5} = 77 \text{ եւ}$$

$$+ = \frac{77 - 2 \frac{2}{5}}{11}$$

+ ի արժէքին մէջ կը դիտենք Թէ 2 $\frac{2}{5}$ պարտի բաժանական լինիլ 11 ուլ. եւ քանի որ 2 նախնական Թիւ մ'է, $\frac{1}{5}$ հաւասար է 11 ի բազմապատկի մը կամ 0 ի: Արդ 11 ի բազմապատկի մը մէկէ աւելի Թուանշան ունի ինչ որ կարելի չէ $\frac{1}{5}$ արժէքին համար, ուրեմն $\frac{1}{5} = 0$ որով եւ $+ = 7$:

Մենդեան տարին է հետեւաբար 1870:

ԱՆՊԻԱՆՔ ԼՈՒԾՈՂԱՅ

S. Ս. Յ. Յ.	Գատը-դիւղ
Օր. Մ. Զօհրապ,	Գատը-դիւղ
S. Բարսեղ Մ. Մկրտչեան,	Աշակ. Ղալա-
	Թիւոյ վրժրնի:
S. Կ. Յ. Աղաբէկեան	Իւսկիւտար
S. Կ. Ուրբէն	Իւսկար. Իճատիէ

S. Կ. Ռ. Իճատիէ. — Անորոշ հաւասարութեանց լուծման մէջ աւելի բացորոշ ըլլալու է:

S. Պ. Սրապեան. Սղերդ. — Թիւ 12 խնդրի լուծումներդ ուղիղ է:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

21 Փետրուար 1886

Տխուր եւ ուրախալի լուրեր միանգամայն ունեցանք շաբթուս մէջ:

Քաղաքական Ժողովն առժամապէս դադարեցուցած է իւր նիստեր ի նշան «դոյ իւր ողբացեալ անդամակցին Սերովբէ Էֆ»:

Կիւլպէնկեանի : Բայց Ս. Պատրիարք Հայրը չդադրիր գործելէ եւ կ'ըբարդնէ ներքին եւ արարքերական խնդրոց կարգադրութեամբ : Գլխաւորաբար այդ գովելի ջանքերուն կը պարտինք այն նպատակն ու վճիռ զոր այս օրերս տուաւ Շէյխ - Իւլ - Իսլամի Դրան Թահգըդաթը Շէրիէի բարձրագոյն ատեա- նըն , բեկանելով Գազասկերի Դատարանի վճռագիրն որով Երուսաղէմի Ս. Յակովբ- եանց վանքին մէկ ընդարձակ գետինն ոյր արժէքը 20,000 էն 80,000 ռակի ենթադ- րուած է , փաստաբան Կարկուր էֆէնտիի ստացուածքը լինել կը հռչակուէր : Երկար կը լինի պատմել այս դատի անցեալ ման- րամասնութիւններն որք այնքան մտահո- գութիւն պատճառեցին Երուսաղէմայ Միա- բանութեան որքան համայն Ազգին , ըստ որում ազգային ամենակարեւոր կալուած մը ձեռքէ ելնելու վտանգին մէջ էր . սա- կայն , շնորհիւ կայս . կառավարութեան ար- դարադատութեան , ճշմարտութիւնը պար- զուեցաւ հուսկ ուրեմն եւ Կարկուրեան մեքենայութիւնը մերկապարանաց նշաւա- կեցան :

Ուրախ ենք նաեւ որ հաստատուեցաւ Կաւկասիոյ հայ վարժարանաց վերաբացման լուրն : Մոսկուայէ Խմբագրութեանս հա- սած նամակներ , եւ Բեդրսպուրկէն Փարի- զի լրագրաց ուղղեալ հեռագիր մը կը մեկնեն Ձարին հրամանն որ ելած է Վեհ . Կաթո- ղիկոսի առաջարկութեան վրայ : Իրողու- թիւնն այն է թէ վարժարանաց բացումը պայմանաւոր է , այսինքն ուսն կառավա- րութիւնը զիջողութիւն ըրած է յանձին Վեհ . Հայրապետին , արտօնելով որ հայ ուսումնարանաց վրայ Տէրութեան կողմէ անմիջական հսկողութիւնը փոխանակ կա- ռավարութեան պաշտօնեայ Եանուսիկի հո- գաբարձուն կատարելու , Մակար Կաթողի- կոս ինք ստանձնէ իւր կենդանութեան օ- րով : Իսկ ապագայն՝ ապագայի գործ է : Ռուսահայ վարժարանաց դռներն որք փակ- ուած էին 1885 փետրուար 28 էն ի վեր , կը վերաբացուին տարի մը յետոյ , եւ այս- պէս կ'ամռէի դառնութիւնն պետական հարուածի մը որ այնքան չեղտակի հար- ուածած էր մեր ուսումնայ եղբարց սրտերն : Իրաւ է թէ յուսեմք ոմանք գոհ չեն երե- վրեղած կարգադրութենէն , բայց մենք զանց

կընենք արտայայտել ստոգանազան տպաւո- րութիւններն , չատանալով միայն իրողու- թիւններն յիշել անցողակի :

Ամենայն Հայոց Հայրապետի հոգածու- թենէն կ'սպասուի նաեւ ազդու տնօրինու- թիւն մը Կիլիկիոյ միաբան Մկրտիչ Մանի- սալեան Եպիսկոպոսին-ձեռնասուն Տ. Մկր- տիչ Կաթողիկոսին-նկատմամբ , որ ի նպաստ Զէյթունի եւ Կիլիկիոյ հրկիզելոց Հնդկաս- տանի մէջ հանգանակութիւններ կատարելէ յետոյ , Անկիլքան Եկեղեցւոյն յարած էր վարդապետի մը հետ : Ս. Պատրիարք Հայ- րը զայս ամենայն ծանոյց ի Ս. Էջմիածին , միւս կողմէ գրելով նաեւ առ Ամեն . Կա- թողիկոսն Կիլիկիոյ , որպէս զի եա կոչէ յիշեալ Եպիսկոպոսն , եւ թէ այսուհետեւ ո՛չ զոք նուիրակ զրկէ ի Հնդկաստան եւ ի Պարսկաստան , առանց հրամանի Վեհ . Հայ- րապետին Ազգիս :

Շաբթուն մէջ հետզհետէ ցաւալի լու- րեր հասան գաւառներէն : Կրօնափոխական հոսանքն երկիւղալի կերպիւ կը տարածուի մեր ազգայնոց մէջ , առաւել քան երբէք զգալի ընելով անհովիւ վիճակներու առաջ- նորդաց ընտրութեան եւ անկարող հովուաց փոփոխութեան պէտքն : Դեռ նոր , Ազգ . Ժողովոյ վերջին նստին մէջ , եկեղեցական պատի . Երեսփոխան մը ամենախորին ու- չաղրութիւն կը հրաւիրէր Վատիկանի բե- րան համարուող թերթի մը հրատարակու- թեանց վրայ , յորս գովութեամբ կը յիշա- տակուէին Հայ Կաթողիկ կղերին յաջողու- թիւնն գաւառաց մէջ եւ Գեր . Ազարեան Պատրիարքի գործունէութիւնը կեդրոնէն : Տ. Մկրեան Հօր ազդու դիտողութիւնը իրենց արձագանքը գտնել սկսած էին մեր ազգային պաշտօնական շրջանակաց մէջ եւ Պատրիարքարանէն կը գրուէր շատ մը գաւառաց առաջնորդներու , եւ ահա պա- տական թերթին դուշակութիւնը տխուր իրականութիւն մ'եւս կը գտնեն նորանոր վայրեր : Երեքշաբթի առաւօտ Քարբերդէն հեռագիր մը կը ծանուցանէր թէ Ձարան- ճագի հայ հասարակութեան մէկ մեծ մասն հարկադրուեր է մտնել Քարբերդի Հայ Կա- թողիկ Առաջնորդին իրաւասութեան ներ- քեւ : Երկու օր յետոյ մայրաքաղաքս գտնուող Սեբաստացի ազգայնոց պատգա-

մաւորութիւն մը Ս. Պատրիարք Հօր ներկայանալով, ցաւ ի սիրտ յայտարարեք է թէ Սեբաստիոյ բաղաքին մէջ 40 հայ ընտանիքներ կաթողիկոսեան դիմած են, եւ խնդրեք է ազգու դարման մը: Աւելորդ է ըսել թէ Ս. Պատրիարք Հայրը պէտք եղած ազգու տնօրինութիւնները կընէ մէկ կողմէն, բայց միթէ՞ կեդրոնին հրահանգները բաւական են այս ցաւալի անցից առաջին առնուլ, եթէ առաջնորդը պէտք եղած ջանքը, անձնուիրութիւնը եւ գործունէութիւնը ցոյց չի տան: Փափագելի է որ Զարսանձաքի եւ Սեբաստիոյ ազգայնոց կրօնափոխութեանց նման ցաւալի դէպքեր երկնելու հարկին մէջ չ'գտնուինք այլ եւս. անշուշտ Վարչութիւնն, եւ մանաւանդ Կրօնական Ժողովն մեծ ուշադրութեամբ կը հետեւին այս անցից եւ արտասովոր հոգածութեամբ պիտի աջակցին իրենց Ս. Նախագահին ջանից:

Հրաժարեալ Վարչութեան մը կանոնաւոր համարատուութիւնն եթէ ոչ հազուադէպ ինչ, գէթ անբացառիկ սովորութիւն մը դարձած չ'լինելով տակաւին մեր ազգային շրջանակաց մէջ, կ'արժէ այս հակիրճ տեսութեան մէջ յիշատակութիւնն ընել համարատուութեան մը որ հրատարակեցաւ այս օրերս:

Նախորդ Տնտեսական Խորհուրդն՝ որոյ անդամք էին՝ Գ. Գարբիէլեան էֆ. (Ատենայետ) Խ. Կամարական էֆ. (Գանձապետ) Մ. Զօպանեան էֆ. (Ատենադպիր) և Մ. Սարրաֆեան ու Յ. Նէմէնիճեան էֆ.իք, հրատարակեց իւր համարատուութեան տեսչեկագիրն, սկսեալ 1883 դեկտ. 1 էն ցվերջ յունիսի 1885: Այս համարատուութիւն որ սահմանադրական Տարեգլխոյն մատուցուած է Կեդր. Վարչութեան, եւ այժմ հրատարակուած, բաժնուած է չորս մասերու եւ 76 գլուխներու: Այդ Տնտեսական Խորհուրդ՝ իւր նախորդէն ժառանգելով 159 տնտեսական, կտակային եւ այլ խնդիրներ, ադոնց տնօրինութեանց հետ կարգադրած է նաեւ 500 է աւելի խնդիրներ: Տեղեկագրոյն առաջին մասին մէջ յիշուած են՝ ազգ. սեպականութեանց, հնութեանց, ընկերութեանց, հանդանակութեանց եւ ազգ. հաստատութեանց հաշուոց վերաբեր.

եալ տնօրինութիւնք: Երկրորդ մասն յատկացեալ է գաւառական գործոց, Պատրիարքարանի ներքին խնդրոց, ազգային շինութեանց, ժառանգական եւ թաղային զանազան խնդրոց: Երրորդ մասը կը խօսի կտակագրոց, պայմանագրոց, նուէրներու եւ նպաստներու վրայ: Զորրորդ մասը զուտ ելմտական է: Համարատուութեան այս տետրին կցուած են չորս հաշուեցոյց տախտակներ, որք կեդ. Սնտուկի ելեւմտից վիճակը կը ներկայեն նախորդ Տնտեսական Խորհուրդոյ պաշտօնավարութեան օրով:

* * *

Ներքին լրոց մէջ, յիշատակութեան արժանի է Անատուլի մէջ երկաթուղւոյ մը հաստատման ծրագիրն որով կ'զբաղի Բ. Դուռն: Այս գործոյն նախաձեռնութիւնն ստանձնած է Երկրագործական Սենեկի նախագահ Վսեմ. Նէճիսլ փաշա որ մանրամասն տեղեկագրեր մատուցած է Բ. Դրան: Տեղեկագիրն ի մէջ այլոց կըսէ թէ Անատուլի երկաթուղիներն ամէնքը մէկանց չ'ինել անհնար լինելով, հինգ մասերու բաժնուած է անոնց շինութիւնն: Առաջին գիծն Հայտար-Փաշայէն սկսելով, պիտի հանդպի Ատա-Փաղար, Պիլէճիք, Էսկի-Շէհիր, Բէօթահեա, Աֆիօն-Գարահիսար, Ա.գ-Շէհիր, Գօնեա, Էրէյլի, Ատանա եւ Իսկէնտէրուէի ծովածոցին մէջ գտնուած Եւմուրթալըդ նաւահանգիստն: Երկրորդ գիծն սկսելով Գօնեա - Էրէյլիէն, պիտի հանդիպի Նիկոէ, Գայսէրի, Սըվազ, Երզնկայ, Էրզրում: Այս գծերու առաջնոյն երկայնութիւնը պիտի լինի 900 եւ երկրորդինը 840 հազարամէթր:

Ընկերութիւնն այս երկու մասերու երկաթուղեաց շինութեան համար չրջաբերութեան պիտի հանէ 6 միլիոն բաժնեթուղթ, իւրաքանչիւրն 8 Մէճիսլիյէ արժէքով: Բաժնետոմսից մէկ միլիոնը պիտի սպառի մայրաքաղաքիս մէջ, կէս միլիոնը պիտի գնուի երկրագործական Սնտուկներու կողմէ, իսկ մնացեալ չորսուկէս միլիոնը գաւառաց պիտի բաշխուի, իւրաքանչիւր տան համար պարտաւորիչ ընելով մէկ բաժին գնել: Մէն մի բաժնի տէր պիտի վճարէ տարին մէկ Մէճիսլիյէ. հաւաքեալ գումարը պիտի

յանձնուրի Օսմ. կայս. Պանքային :

Եթէ դրամական հարկ եղած ապահովութիւնը տրուելով, լաւ կազմակերպեալ ընկերութիւն մը հաստատուի անմիջապէս շինութեանց գործին ձեռնարկելու համար, աւելորդ է ըսել թէ ո՞րքան չահաւէտ կըրնայ լինիլ այս ձեռնարկութիւն թէ՛ զայն գործադրող ընկերութեան, եւ թէ՛ մանաւանդ այն գաւառաց համար որոց մէջէն պիտի անցնի երկաթուղւոյ այս ընդարձակ գիծն :

Կայս. կառավարութիւնն անցեալ շաբթուրէն սկսեալ արգիլած է արմտեաց արտածութիւնը Կ. Պոլսէն. նմանօրինակ արգելք մը դրած են նաեւ պուլկար իշխանութիւնը Արեւելեան Բուլղերի. եւ Վառնայի համար, ուստից արմտեաց արտածութիւնն արգիլուած է այնպիսի խստութեամբ, որ մինչեւ իսկ ի Փիլիպէ երկաթուղւոյ կառքերուն մէջ դիզուած ցորէնն՝ որ Կ. Պոլիս պիտի ղրկուէր, վար առնուեր է այս օրերս :

Այս արգելքներ մտահոգութիւն պատճառելու բնութիւն մը չունին սակայն, քանի որ քաղաքական դէպքերը խաղաղութեան կողմ կը հակին : Շատ յոյս կայ որ Աղբքսանդր իշխանին եւ Բ. Դրան միջեւ կնքեալ պայմանագիրն՝ որ գրեթէ բոլոր մեծ Տէրութեանց հաւանութիւնն ստացած է, ի բաց առեալ զինուորական փոխադարձ օգնութեանց կէտն, Ռուսիոյ հաւանութիւնն եւս ստանայ : Այդ պարագային մէջ, հաւանաբար Դեսպանախորհուրդ մը պիտի գումարի, կնքեալ Պայմանագիրը վաւերացնելու համար : Այժմ կրնանք հաւատալ Դեսպանախորհրդոյ գումարման հաւանականութեան, ըստ որում անգլ. նորընտիր դեսպանն մայրաքաղաքս հասած է արդէն, եւ Գորթի կոմսի յաջորդն՝ Կալվանիա կոմսն եւս մեկնած է Հռոմէն եւ այսր կը հասնի յառաջիկայ երկուշաբթի : Սըր Էտ. Թորընթըն այս շաբաթ օր պատիւ կունենայ վեհ. Սուլթանին ներկայանալ, իւր յանձնարարագրերը մատուցանելու համար. իսկ հրաժարեալ դեսպան Սըր Հուայդ. իւր հրաժեշտը մատուցած է արդէն, եւ այս օր կը մեկնի ի Պուքրէշ՝ իւր դեսպանական նա-

խորդ պաշտօնն ստանձնելու :

*
*
*

Քաղաքական տեսակէտով, պատմական թուական մը կը կազմէ շաբթուս չորեքշաբթի օրն, 19 փետր. 3 մարտ, յորում հաշտութեան Դաշնագիրն ստորագրեցաւ ի Պուքրէշ, ընդ մէջ Սերպիոյ եւ Պուլկարիոյ : Համայն Եւրոպիոյ դիւանագիտաց աչքն յառաջ էր Բուսանիոյ մայրաքաղաքին մէջ կատարուած բանակցութեանց վրայ, որոցմէ կախում ունի ո՞չ միայն Սերպիոյ եւ Պուլկարիոյ հաշտութիւնն, այլ գուցէ նաեւ ընդհանուր խաղաղութեան պահպանումն : Ընդհանրապէս կարծիք կայ թէ Պալքանեան երկու փոքր պետութեանց փոխադարձ զիջողութիւններով համաձայնութիւնն օրինակ մը լինի Յունաստանի, որ միշտ սպառազինեալ, կաղմ եւ պատրաստ կ'սպասէ, ցամաքի կողմէ իւր դէմ ունենալով օսմանեան ահարկու զօրութիւնը եւ ծովու կողմէ եւրոպական միացեալ նաւատորմն :

Չ'մոռնանք յիշել, իբր պատմական ինչ, թէ Սերպիոյ եւ Պուլկարիոյ միջեւ կնքեալ պայմանագիրը միակ յօդուած է մը կը բաղկանայ, որ եզակիսն է կարծենք դիւանագիտական տարեգրութեանց մէջ : Այդ միակ յօդուած հետեւեալն է .

Ներկայ Դաշնագրոյ կնքման թուականէն սկսեալ խաղաղութիւնն հաստատուած է ընդ մէջ Սերպիոյ Թագաւորութեան եւ Պուլկար իշխանապետութեան :

Վաւերացմունք պիտի փոխանակուին ի Պուքրէշ, ներկայ Դաշնագրոյ կնքումէն 15 օր յետոյ, կամ աւելի կանուխ, եթէ կարելի լինի :

Այս փոխանակութենէ յետոյ, Սերպիա եւ Պուլկարիա պիտի պրուեն իրենց զօրքերը : Աղբքսանդր իշխանն այս նպատակաւ Փիլիպէէն Սոֆիա ուղեւորած է արդէն, ուր յայտարարութեամբ մը ժողովրդեան ծանուցած է խաղաղութեան կնքումն : Սերպիա եւս հրատարակեց արքայական հրովարտակ մը՝ հրամայելով գործօն բանակին եւ պահեստի երկրորդ կարգին զէնքակցուութիւնն :

Տ. Ա.

ՄԻԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

Պ Ա Ր Ա Հ Ա Ն Գ Ի Ս Ն

Գրուած է կարծես թէ ինչ որ Միացեալ Ընկերութեանց ազգօգուտ նպատակին իրազօրծման նպատակը հանգամանքն ունի, ջերմագոյն համակրութիւն մը կը վայելէ յամենուտ: Միացեալ Ընկերութեանց տարեկան պարահանդէսներն ամենէն ակներեւ ապացոյցըն են այսմ, և այս հինգշաբթի գիշերուան Պարահանդէսն եւս եկաւ աւելի հաստատ հիմ մը տալ մեր կարծեաց: Ձենք ուղեր աստ կրկնել Պարահանդէսին շուքին ու փայլին գովեստներն, որք քանիցս արդէն յեղյեղուած են այս սիւնակաց մէջ: Ամեն տարուան նման, նոյն եռանդն, նոյն ոգեւորութիւնն, պարողաց ու պարուհեաց մէջ նոյն խանդն, կարգադրութեանց մէջ նոյն ներդաշնակութիւնն, բարեկարգութեան մէջ նոյն յարատեւութիւնն: Արդարեւ, ժամ 3 1/2էն սկսեալ Պոլոյ ամեն կողմերէն ազգայինք և օտարազգիք կը դիմէին Նոր Թատրոնի սրահըն, որ նեղ կուգար անդ համախմբեալ բազմութեան: Պարի առաջին նշանէն իսկ զոյգերը կը պտուտկէին իրարու խառնուած, սեղմ և կուռ, և այս ոգեւորութիւն տեւեց մինչեւ վերջը: Նուագածուաց ընտիր խումբ մը, առաջնորդութեամբ քաջածանօթ երաժշտապետ Պ. Ճիւմալվայի, կը հնչեցնէր պարի եղանակներ: Գոհութեամբ դիտեցինք թէ այդ եղանակաց երկուքըն հայ երաժշտաց գրչին էին արդիւնք: Մին Յակոբ Էֆ. Սատուրի մէկ գեղեցիկ ձևն էր, ՇԱՐԻԹԷ, և միւսն Մէրճան Էֆէնտիի մէկ ընտիր քույրն, ՃԷԼԼՈ, զոր իւր ծախիւք տպագրելով Միացեալ Ընկերութեանց նուիրած է Լեւոն Էֆ. Փափազեան:

Թէեւ, ինչպէս ըսինք, բազմութիւնը խուռն էր որպէս միշտ, այլ օթեակներուն մէջ իրենց պակասն զգալի ընել կուտային բազմաթիւ հայ ընտանիք-

ներ, Նուրեան, Կիւլպէնկեան, Մանուկեան, Կիւմիւշկէրտան, Մաքսուտեան, Նորատունկեան, Ներսէսեան, Գաբամաճեան, Հարէնց, Եուսուֆեան, որք իրենց վերջին սուգերուն պատճառաբացակայ կը գտնուէին: Այսուհանդերձ օթեակները լեցուն էին հայ և օտարազգի բարձր դասու ուրիշ ընտանիքներով:

Ներկայ բարձրաստիճան անձանց մէջ կը նշմարուէր Վեհ. Սուլթանին Ա. Սենեկապետ Վսեմ. Օսման պէյ:

Ժամը 3 1/2ն էր երբ Պարահանդէսին Կարգադիր Յանձնախմբի նախագահ Պ. Փոսդէր ներս մտաւ սրահէն և բազմեցաւ շքեղապէս զարդարեալ կեդրոնական օթեակը: Կարգադիր Յանձնախմբին անդամք յարգամեծար պառլով ընդունեցին այդ Հայասէր Անգլիացին, որ նկատմամբ այնքան համակիր զգացումներ կը տածէ ամեն երախտագէտ հայ սիրտ:

Հանդէսն այսպէս շարունակեցաւ մինչեւ առաւօտ ամենայն կանոնաւորութեամբ և շքեղութեամբ: Պարերը միմեանց կը յաջորդէին և երբեմն խումբերն այնքան բազմաթիւ կը լինէին որ շատեր կ'ստիպուէին մեկուսանալ վայելելով միայն այդ ընդհանուր յորձանքին հանդիսատես լինելու հաճոյքը:

Արշալոյսը միայն կրցաւ վերջ տալ այդ ընդհանուր խրախճանաց: Փողոցին մէջ ուրիշ «անակնկալ» մը կ'սպասէր հանդիսականաց: Ձիւնն, սպիտակ ձիւնն, որ այնքան երկար ատեն է չէր պահած էր մեզնէ իւր մաքրափայլ դէմքն, ծածկած էր ամենուրեք թեթև քօղով մը: Եւ կառքերու թաւալմանց հետ ամեն ինչ անհետացաւ այդ շքեղ հանդէսէն:

Արտօնատէր Կ. Ս. Իիթիիճեմն
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԼՐԱԳՐՈՅ